№ 7 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 18 **1897** ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 18 № 7

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

(25-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կէս տարվանը՝ 6 ռուբլի

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Առտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK».

Կարապետ, Մկրտիչ, Արշակ, Առաքել, Աւետիս Աւագեանցները, Արուսեակ Կարապետեան, Տիրուհի Յովակիմեան Աւագեանցները, Աղասար Ոսկանեանց, խորին վշտով յայտնելով ազգականներին և ծանօթներին առաջինների սիրելի մօր, երկրորդների՝ սկեսուր և երրորդի քրոջ՝

ՏԻՐՈՒՀԻ ՈՍԿԱՆԵԱՆ ԱԻԱԳԵԱՆՑԻ

մահվան մասին, խնդրում են չնորհ բերել հանգուցեալի թաղմանը կիրակի, յունվարի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, Քարափի սուրբ Յակոբ եկեղեցուն պատկանող տանից, դէպի նոյն ս. Յակոբ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ Ամբիծքը կատարվում է ամեն օր երեկոյեան ժամը 6-ին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ բարեգործը. Հեռագիրներ. Վարնայի բոլգարական միտինգը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Հայերը Կովկասեան վարչութեան մէջ. Հանգանակութիւն յօգուտ գաղթականների. Նամակ Պեատիգօրսկից. Նամակ Էջմիածնից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Թիւրքերէն «Վան» լրագիրը Վանի մէջ. Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արեւելեան հարցը.

ՄԵԾ ԲԱՐԵԳՈՐԾԸ

—

Թէ „Մշակի“ մէջ տպած Թղթակցութիւնները և թէ մասնաւոր աղբիւրներից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Թիւրքիայից մեր երկիրը փախած գաղթականները մեծ մասամբ ապաստան են գտել գիւղերում։* Մեր գիւղական ժողովուրդն է, որ իր հաշուով պահում է թշուառ փախստականներին, գիւղացին է, որ իր ունեցածի մի մասը բաժին է հանում իր կարօտեալ եղբօրը և էապէս օգնում հազարաւոր բազմութեան։ Այդպէս է այժմ, այդպէս է եղել անցեալում, այդպէս էլ կը լինի և ապագայում։ Սակայն սրտի խորին կսկիծով պէտք է արձանագրենք, որ մեր գիւղական ժողովուրդը այժմ չէ կարողանում այնպէս հեշտութեամբ տանել այդ աւելորդ ծախսերը, ինչպէս անցեալում և միայն եղբայրակցի կարօտութեան մեծութիւնն է, որ նրան ստիպում է յանձն առնել նոր զրկանքներ իր կեանքի մէջ, որ առանց այն էլ զրկանքներով լի է։ Իսկ ապագայում այդ զրկութիւնը աւելի էլ ծանր կը դառնայ, եթէ վաղօրօք միջոցներ չեն մշակվի և ձեռք առնվի՝ բարձրացնելու մեր գիւղի բարեկեցութեան և ապահովութեան մակերևոյթը։

Մեր գիւղական ժողովուրդը առաջվայ ժամանակները, երբ հողը առատ էր, երբ իւրաքանչիւր գիւղական տուն միջոց ունէր հերկել և ցանել այնքան հող, որչափ մշակելու ոյժ ունէր, միշտ պատրաստ էր կերակրելու և ուրիշին։ Թիւրքաց և պարսից զօրքերը շատ անգամ, ամբողջ ամիսներով, և նոյն իսկ տարիներով կանգ են առել մի որ և է շրջանում և կերակրվել են ձրիապէս այդ շրջանի գիւղական ժողովրդի հասոյթներով։ Կովկասում գիւղական ժողովուրդը ներկայ դարի ընթացքում մի քանի անգամ առիթ է ունեցել ընդունել գաղթականներ և իւրաքանչիւր անգամ պատուով կարողացել է իր հիւրասիրութեան և եղբայրասիրութեան ապացոյցներ տալ։ Սակայն ատաձնաբար ընկնող նրա անտեսական դրութիւնը շատ դժուար տանելի են դարձրել նրա համար այն բեռը, որ նա պատրաստակամութեամբ յանձն է առնում ամեն անգամ։

Եթէ մեր գիւղական մասսան թուլացած չը լինէր վերջին տարիների անբերրիութիւնից և սակաւահողութեան ծանրութիւնից, կարելի է համարձակ ասել, որ նա այնպէս կը պատսպարէր և կը պահպանէր մեր բոլոր գաղթականներին, որ նրանց թշուառ վիճակի մասին մենք հոգալու պէտք էլ չէինք ունենայ։ Աւելի աջող պայմանների մէջ մեր գիւղերը կը տեղաւորէին ոչ միայն այն բազմութիւնը, որ եկել է մեր կողմերը, այլ և դրա կրկնապատիկը և աւելին։

Ոչ մի բարեգործական հիմնարկութիւն, ոչ մի նպաստող մասնաժողով, ոչ մի հանգանակութիւն չէ կարող այնպէս հիմնովին, այնպէս յարատև և հաստատ կերպով օգնել մեծ աղէտների ժամանակ, ինչպէս ապահովված ժողովրդական մասսան, որն իր լայն և ընդարձակ կրծքի վրա տեղ ունի փայփայելու և մխիթարելու հազարաւոր արտասվողների։

Գիւղական մասսայի բարեկեցութիւնը, ահա այն մեծ և հիմնական խնդիրը, որ դրված է մեր հասարակութեան և ինտելիգենցիայի առաջ և զգացնել է տալիս իր մեծ և էական ոյժը բոլոր դէպքերում, երբ ծագում են խոշոր հասարակական խնդիրներ և յայտնվում են ժողովրդական մեծ աղէտներ։

Բարձրացնելով մեր ժողովրդի ապահովութեան աստիճանը, զարգացնելով նրա նիւթական և մտաւոր հարստութիւնը, դրանով մենք ոյժ կը տանք այն հիմնական ֆօնդին, որ ընդունակ է խոշոր գործերի, խոշոր զոհաբերութիւնների և խոշոր բարեգործութեան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Թուլաց գործակալութեան)

—

Կ. Պոլիս, 16 յունվարի։ Բ. Դրան պատասխանը հայոց պատրիարքարանի զեկուցագրին թէպէտ մեղմ ձեով է գրված, բայց պատրիարքարանի թախանձագին ցանկութիւններին բաւարարութիւն չէ տալիս։ Պատրիարքարանին մօտ չրջաններում այդ հանգամանքը մեծ դժգոհութիւն յարուցեց։ Ասում են, որ այդ պայմաններում դժուար է շարունակել հայտութեան գործը։

Երիտասարդ Թիւրքերի կոմիտէը քաղաքական և զինուորական չրջանների բարձր պաշտօնեաներին նամակներ ուղարկեց, որոնցով պահանջում է փոխել կայսրութեան համար կրստաբեր այժմեան կառավարչական սիստեմը։

ՎԱՐՆԱՅԻ ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՄԻՏԻՆԳԸ

—

Վարնա քաղաքում դեկտեմբերի 29-ին կայացել է մի մեծ միտինգ, որին մասնակցում էին Թիւրքաց կայսրութեան զանազան տեղերից եկած աւելի քան 5,000 պատգամաւորներ։ Այդ միտինգը, որ կազմել էր «Սարանջա» ընկերութիւնը, ուշադրութեան առնելով Թիւրքաց լուծի տակ գտնվող քրիստոնեաների ծանր վիճակը, Բ. Դրան խոստացած բէֆօրմների դանդաղ գործադրութիւնը և առհասարակ նրանց անբաւարարութիւնը քրիստոնեաների վիճակը արմատակա-

դառնալի կերպով անցան այն ժամանակները, երբ նա որոշ լարձակողական ծրագիրներ էր սրոնում Թիւրքիայի դէմ, որովհետև 19-րդ դարի Ռուսաստանը արդէն բոլորովին այն չէ, ինչ որ էր 18-րդ դարում։ Այդպիսի մտքերի մենք պատահում ենք և իշխան Գօրչակովի՝ 1860 թ-ին բարօն Բրիւնովին ուղղած հեռագիրներից մէկում։

Ի հարկէ, Ռուսաստանը նրա համար չէ այնքան մարդկային և դրամական զոհեր արել Բալկանի իր եղբայրների վիճակը լաւացնելու համար, որպէս զի ստիպի նրանց մի իշխանութիւնից մի ուրիշ իշխանութեան տակ մտնել. նրա և ամբողջ սլավոնականութեան բարձրագոյն շահերը պահանջում են, որ Բալկանեան ցեղերին օրքան կարելի է լիակատար և լայն անկախութիւն չնորհվի, թէ քաղաքական և թէ, առհասարակ, կուլտուրական՝ նրանց իւրաքանչիւրի անհատականութեան համաձայն։ Այդ ամենին չէ հերքում, այլ թոյլատրում է, որ նրանք մեզ հետ կենդանի հաղորդակցութիւն ունենան մտաւոր և հոգևոր չրջանում, որովհետև, իրերի զօրութեամբ, Ռուսաստանը հանդիսանում է իբրև նրանց ամենալաւ դաշնակիցը և պաշտպանը այն բոլոր հարցերում, որոնք սպառնում են նրանց ինքնուրոյն գոյութեան։ Միւս կողմից այդպիսի մի քաղաքականութիւն միանգամայն համաձայն է ռուսաց բոլոր քաղաքական և առևտրական շահերին։ Բալկանեան թերակղզու նուաճումը Ռուսաստանի ձեռքով կարող է կատարվել միայն մի չարք սարսափելի պատերազմների և բըռնութիւնների միջոցով և նրա հետևանքը կը լինէր կենսական հաւասարակշռութեան խախտումը իր սեփական քաղաքական օրգանիզմի մէջ։

3) Բալկանեան թերակղզու գրաւման անհնարաւորութիւնը որ և է մի պետութեան ձեռքով, ներշնչել է կաբինէտներին նրան բաժանելու միտքը։ Այդ միտքը, ինչպէս յայտնի է, շատ տարածված էր հին չկոլայի դիպլոմատների մէջ։ 17—18 դարերի դինասոփական քաղաքականութեան չրջանում, քանի քանի ծրագիրներ յօրինվեցին հողերի բաժանման և փոխանակութեան մասին. կարծես նրանք մասնաւոր կալուածներ լինէին։

Դեռ 1800 թ-ին կոմս Բոստոպչինի՝ Պավել կայսրին մատուցած զեկուցագրի մէջ ասված էր. «Բ. Դուռը, քայքայված իր բոլոր մասերում, իր անվճռականութեամբ ջլատում է իր կառավարութեան վերջին ոյժերը։ Նրա ձեռք առած այժմեան բոլոր միջոցները ոչ այլ ինչ են, եթէ ոչ անյոյս հիւանդին տուած դեղեր, որին բըժիշկները չեն կամենում յայտնել վտանգի մասին։ Այդ պատճառով ես առաջարկում եմ Թիւրքիայի բաժանումը, համաձայնվելով Պրուսիայի, Աւստրիայի և Ֆրանսիայի հետ։ Ռուսաստանը վեր կառնի Ռումինիան, Բոլգարիան և Մոլդավիան. Աւստրիան—Բոսնիան, Սերբիան և Վալախիան. Պրուսիային կը տրվի, իբրև փոխարինութիւն, ամբողջ Հանովերեան կուրֆիրստութիւնը և Պատէրբօրնեան եպիսկոպոսութիւնը, իսկ Ֆրանսիային—Եգիպտոսը։ Յունաստանից կազմել մի հանրապետութիւն Արխիպելագեան բոլոր կղզիների հետ միասին, Վենետիկեան կղզիների նման, օսմանեան պետութիւնը իրանց մէջ բաժանող չորս պետութիւնների հովանաւորութեան տակ»։

Տիլզիտում Եւրոպայի այն ժամանակվայ ամենահզօր թագաւորները, Ալէքսանդր I և Նապոլէօն, քննելով քաղաքական գործերը, չօչափեցին իրանց մտերիմ խօսակցութիւնների մէջ և արեւելեան հարցը։ Նրանց մէջ գծագրված էր նոյն իսկ Թիւրքիայի բաժանման ծրագիրը. Ռուսաստանը, Անգլիայի հետ յարաբերութիւնները կարգելու պայմանով, գրաւելու էր անմիջապէս Դունայեան իշխանութիւնները, իսկ ապագայում ստանալու էր Բեսարաբիան, Մոլդավիան, Վալախիան և Բոլգարիան, մինչև Բալկանները. Նապոլէօնը միացնելու էր իր երկիրների հետ—Ալբանիա, Թէսալիա, Մորէա, Կանդիա և համաձայնում էր տալ Աւստրիային Բոսնիան և Սերբիան։ Թիւրքերի ձեռքում մնում էին՝ Կ. Պոլիսը, Ռումելիան, Փոքր-Ասիան և Եգիպտոսը։ Երբ Ալէքսանդր ցանկութիւն յայտնեց տնկել խաչը ս. Սոֆիայի տաճարի վրա, Նապոլէօնը, Թիէրի ասելով, բացականչեց. «Կ. Պոլիսը՝—երբէք. այդ կը նշանակի ամբողջ աշխարհին տիրապետել»։ Էրֆուրտի կոնգրէսում Նապոլէօն յայտնեց Ցարին, թէ դեռ չէ հասել Տիլզիտի իրանց ծրագիրը իրագործելու ժամանակը։ Դրանից յետոյ նրանց մէջ տեղի ունեցած պառակտումը վերջ տուեց և այդ ծրագիրներին *)։

---

* „Մշակ“ 1896 թ. № 152.

*) Potel. Aperçu historique des affaires d'Orient.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

(Գրեց պրոֆէսօր կոմս Լ. Ա. Կամարովսկի)

IV *

Ռուս պետական մարդիկ մի քանի անգամ յայտնել են, թէ Ռուսաստանը չէ ձգտում նոր հողային գրաւումներ անել Բալկանեան թերակղզում, միայն թէ միւս պետութիւններն էլ այդպէս վարվեն։ Նիկոլայ կայսրը [աւստրիական դեսպանի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ յայտնեց. «S'il tombe (l'empire turc) je ne venx rien de ses débris, je n'ai besoin de rien»։ (Եթէ Թիւրքաց կայսրութիւնն ընկնի, ես ոչինչ չեմ ուզում նրա բեկորներից, ես ոչ մի բանի պէտք չունեմ)։ 1828 թ-ի գաղտնի կոմիտէատում, որ քննում էր, Նիկոլայ I-ի հրամանով, Ռուսաստանի և Թիւրքիայի յարաբերութիւնների հարցը այն ժամանակ, երբ ռուսաց յաղթական զօրքերը հասել էին մինչև Ադրիանօպոլիս, Դաշկով, մի առանձին զեկուցագրի մէջ, եռանդուն կերպով խօսում է Ռուսաստանին վերագրվող տիրապետական ծրագիրների դէմ. «Այժմ, երբ նրա սահմանները տարածվում են Սպիտակ ծովից մինչև Դունայ և Արաքս և Վիսլայից մինչև Կամչատկա, շատ քիչ են այն նուաճումները, որոնք կարող էին նրան օգտակար լինել»։ Անտարակոյս է, որ այդ ամենը ինչպէս ասեցինք, դարձեալ ապագայում է։ Իսկ ապագայում այդ դրութիւնը աւելի էլ ծանր կը դառնայ, եթէ վաղօրօք միջոցներ չեն մշակվի և ձեռք առնվի՝ բարձրացնելու մեր գիւղի բարեկեցութեան և ապահովութեան մակերևոյթը։

Մեր գիւղական ժողովուրդը առաջվայ ժամանակները, երբ հողը առատ էր, երբ իւրաքանչիւր գիւղական տուն միջոց ունէր հերկել և ցանել այնքան հող, որչափ մշակելու ոյժ ունէր, միշտ պատրաստ էր կերակրելու և ուրիշին։ Թիւրքաց և պարսից զօրքերը շատ անգամ, ամբողջ ամիսներով, և նոյն իսկ տարիներով կանգ են առել մի որ և է շրջանում և կերակրվել են ձրիապէս այդ շրջանի գիւղական ժողովրդի հասոյթներով։ Կովկասում գիւղական ժողովուրդը ներկայ դարի ընթացքում մի քանի անգամ առիթ է ունեցել ընդունել գաղթականներ և իւրաքանչիւր անգամ պատուով կարողացել է իր հիւրասիրութեան և եղբայրասիրութեան ապացոյցներ տալ։ Սակայն ատաձնաբար ընկնող նրա անտեսական դրութիւնը շատ դժուար տանելի են դարձրել նրա համար այն բեռը, որ նա պատրաստակամութեամբ յանձն է առնում ամեն անգամ։

Եթէ մեր գիւղական մասսան թուլացած չը լինէր վերջին տարիների անբերրիութիւնից և սակաւահողութեան ծանրութիւնից, կարելի է համարձակ ասել, որ նա այնպէս կը պատսպարէր և կը պահպանէր մեր բոլոր գաղթականներին, որ նրանց թշուառ վիճակի մասին մենք հոգալու պէտք էլ չէինք ունենայ։ Աւելի աջող պայմանների մէջ մեր գիւղերը կը տեղաւորէին ոչ միայն այն բազմութիւնը, որ եկել է մեր կողմերը, այլ և դրա կրկնապատիկը և աւելին։

Ոչ մի բարեգործական հիմնարկութիւն, ոչ մի նպաստող մասնաժողով, ոչ մի հանգանակութիւն չէ կարող այնպէս հիմնովին, այնպէս յարատև և հաստատ կերպով օգնել մեծ աղէտների ժամանակ, ինչպէս ապահովված ժողովրդական մասսան, որն իր լայն և ընդարձակ կրծքի վրա տեղ ունի փայփայելու և մխիթարելու հազարաւոր արտասվողների։

Գիւղական մասսայի բարեկեցութիւնը, ահա այն մեծ և հիմնական խնդիրը, որ դրված է մեր հասարակութեան և ինտելիգենցիայի առաջ և զգացնել է տալիս իր մեծ և էական ոյժը բոլոր դէպքերում, երբ ծագում են խոշոր հասարակական խնդիրներ և յայտնվում են ժողովրդական մեծ աղէտներ։

Բարձրացնելով մեր ժողովրդի ապահովութեան աստիճանը, զարգացնելով նրա նիւթական և մտաւոր հարստութիւնը, դրանով մենք ոյժ կը տանք այն հիմնական ֆօնդին, որ ընդունակ է խոշոր գործերի, խոշոր զոհաբերութիւնների և խոշոր բարեգործութեան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Թուլաց գործակալութեան)

—

Կ. Պոլիս, 16 յունվարի։ Բ. Դրան պատասխանը հայոց պատրիարքարանի զեկուցագրին թէպէտ մեղմ ձեով է գրված, բայց պատրիարքարանի թախանձագին ցանկութիւններին բաւարարութիւն չէ տալիս։ Պատրիարքարանին մօտ չրջաններում այդ հանգամանքը մեծ դժգոհութիւն յարուցեց։ Ասում են, որ այդ պայմաններում դժուար է շարունակել հայտութեան գործը։

Երիտասարդ Թիւրքերի կոմիտէը քաղաքական և զինուորական չրջանների բարձր պաշտօնեաներին նամակներ ուղարկեց, որոնցով պահանջում է փոխել կայսրութեան համար կրստաբեր այժմեան կառավարչական սիստեմը։

ՎԱՐՆԱՅԻ ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՄԻՏԻՆԳԸ

—

Վարնա քաղաքում դեկտեմբերի 29-ին կայացել է մի մեծ միտինգ, որին մասնակցում էին Թիւրքաց կայսրութեան զանազան տեղերից եկած աւելի քան 5,000 պատգամաւորներ։ Այդ միտինգը, որ կազմել էր «Սարանջա» ընկերութիւնը, ուշադրութեան առնելով Թիւրքաց լուծի տակ գտնվող քրիստոնեաների ծանր վիճակը, Բ. Դրան խոստացած բէֆօրմների դանդաղ գործադրութիւնը և առհասարակ նրանց անբաւարարութիւնը քրիստոնեաների վիճակը արմատակա-

---

*) „Մշակ“ 1896 թ. № 152.

նապէս բարւոքելու համար, հետեւեալ որոշումները կայացրեց.

1) Դարձնել մեծ պետութիւնների դեսպանների ուշադրութիւնը, որոնք զբաղված են Թիւրքիայում ըէֆորմներ մտցնելու հարցով այն բանի վրա, թէ քրիստոնեաները, ինչպէս և Թիւրքաց սարկութեան տակ գտնվող միւս ազգերը, ցանկանում են այնպիսի ըէֆորմներ, որոնք իրանց լիակատար ինքնուրոյնութիւն և անկախութիւն տային. թէ այդ ազգերը խարեբայութիւն են համարում Թիւրքիայի խոստացած բոլոր ըէֆորմները, և թէ նրանք չեն հանդստանայ, մինչև որ ձեռք չը բերեն իրանց համար կատարեալ քաղաքական ազատութիւն, անկախութիւն և ինքնավարութիւն:

2) Խնդրել մեծ պետութիւնների ներկայացուցիչներից վերջ դնել Թիւրքիայում վերջնակապէս ըէֆորմներ մտցնելու հարցին այն մտքով, որ Թիւրքիան հեռացվի իր նուաճած և յափշտակած նահանգներից, այսինքն թող պետութիւնները ստիպեն Թիւրքիային հեռանալ Բալկանեան թերակղզուց, Հայաստանից և այլն. թող Թիւրքերը հեռանան Ասիայի բուն մուսուլմանական մասերը, իսկ հարաւային Ֆրակիան, Մակեդոնիան, Ալբանիան, Հայաստանը և այլն ստանան ազատութիւն և անկախութիւն:

3) Ցայտնել մեծ պետութիւնների ներկայացուցիչներին, թէ մեր ներկայ դիմումը—վերջին օրինական դիմումն է. եթէ մեր այս դիմումը գոհացում չի ստանայ, այն ժամանակ մեր ազգը իրան ազատ կը համարի բոլոր միջազգային բարոյական և իրաւագիտական պարտաւորութիւններից և անպատասխանատու ամեն տեսակ ցոյցերի համար, որ մենք կանենք ստրկացած ազգերի համար մարդկային իրաւունքներ, քաղաքական ազատութիւն և անկախութիւն ստանալու, թէկուզ բռնի միջոցով:

4) Խնդրել բոլգարական կառավարութիւնից բաց չը թողնել այժմ ներկայացող դէպքը և որքան կարելի է եռանդուն կերպով պաշտպանել (նոյն իսկ զէնքը ձեռքին) Թիւրքերի ձեռքով ստրկացած մեր ազգակից ժողովրդի իրաւունքները, ազատութիւնը և անկախութիւնը, ի նկատի ունենալով, որ այդ ազգը խորին կերպով հաւատում է և յոյս ունի մեր ազատ իշխանութեան ժողովրդի օգնութեան վրա:

5) Ներկայ վէճը հաղորդել ռուսաց, ֆրանսիական, անգլիական, գերմանական, աւստրօ-ունգարական, իտալական դեսպաններին, բոլգարական կառավարութեան և ճնշված ազգերի պաշտպաններին—կոմս Իգնատիէվին, Նելիդովին, Գլազոնին և Եւրոպայի նշանաւոր լրագիրներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

IV

Բ. Դուռը, զոնէ այդպէս են ցոյց տալիս Կ. Պոլսից ստացված լուրերը,—թոյլ տուեց, որ Ստամբուլում հայերից մի «նպաստող մասնաժողով» կազմվի, փողեր հաւաքելու և վնասված հայերին օգնելու համար:

Հայերից կազմված մասնաժողովը նպաստներ պէտք է հաւաքի հայերից և բաժանի վնասված հայերին.—բարի է ցանկութիւնը, բայց, տարաբաղդաբար, անիրագործելի: Դա այն տեսակ ցանկութիւններից է, որոնք գրվում են թղթի վրա միայն նրա համար, որ թղթի վրա էլ մնան: Ուրիշ կերպ չէ էլ կարելի հասկանալ:

Թէ Կ. Պոլսի և թէ ամբողջ Հայաստանի հայերը Նիւթական այնպիսի մեծ վնասներ կրեցին, նրանց անտեսական ոյժերը այնքան ցամաքեցին և սպառվեցին, որ նրանցից փող ուզել, նպաստ սպասել, կը նշանակի քարից ջուր ըսպասել: Եթէ Թիւրքիայում կան հայեր, դրանք օգնութեան կարօտ հայեր են, բայց ոչ այնպիսի հայեր, որոնք ոյժ ունենային նպաստներ տալու, իրանց միջից փողեր հաւաքելու:

Թիւրքաց Հայաստանի նիւթականապէս քայքայված հայերի կենդանի ներկայացուցիչները այս րոպէիս մեր առաջ կանգնած են.—դրանք գաղթականներն են: Ինչ կապէ, եթէ վաղը որ և է մէկի գլխի մէջ միտք յղանար գաղթականներից մի մասնաժողով կազմելու, պարտաւորեցնելով, որ այդ մասնաժողովը հէնց գաղթականների միջից նպաստներ հաւաքէր և բաժանէր քաղցածներին և կարօտներին: Անչուշտ կասէինք, որ դա խենթ է:

Այդպէս է նայում հարցի վրա ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը, հակառակ դէպքում ոչ Եւրոպայում, և ոչ էլ Ռուսաստանում ընդհանուր հանգանակութիւններ չէին սկսվի, նպատակ ունենալով օգնել՝ մի մասով Հայաստանում մնացած հայերին, ինչպէս այդ անում են անգլիացիք, իսկ միւս մասով Հայաստանից գաղթած թշուառ հայերին՝ ինչպէս այդ անվում է Ռուսաստանում: Միայն Կ. Պոլսումն է, որ ինչպէս ամեն գործ, այնպէս և բարեգործութիւնը այն եղանակով է կազմակերպվում, որ «քաղցածը պէտք է կերակրի քաղցածին»,—մի ֆորմուլա որը միայն Թիւրք փաշաների գլխում կարող է յղանալ:

Խ. Մալումեան

ՀԱՅԵՐԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կովկասեան նոր կառավարչապետ նշանակելու առիթով «Московскія Вѣдомости» լրագրում տպվեց մի յօդուած, որի մէջ մատնացոյց է անվում աւազակութեան զօրեղանալու վրա Կովկասում և այդ տխուր երեոյթի պատճառը համարվում է այն, որ վարչական պաշտօնները գրաված ունեն «գլխաւորապէս հայերը». դեռ առաջ էլ նոյն լրագիրը մեղադրում էր Կովկասեան գլխաւոր վարչութիւնը այն բանում, որ նա հայ պաշտօնեաներով է «լցրել երկիրը այն ժամանակ, երբ սեպարատիստական հայկական ագիտացիան պարզապէս տէրրօրիստական բնաւորութիւն է ընդունում»: Մի կողմ թողնելով սեպարատիզմի հարցը, որը այդ լրագրի յօդուածների սովորական ակօմպանիմէնտն է կազմում, տեսնենք, թէ որքան ճշմարտութեան համապատասխան են նրա յամառ պնդումները, թէ վարչական տեղերը Կովկասում գրաված ունեն «գլխաւորապէս հայերը»:

Բայց իսկապէս բանից դուրս է գալիս, որ հայերը ոչ թէ միայն պետական վարչութեան մէջ գրաված չունեն բոլոր պաշտօնները, այլ վերջին տեղն են բռնում նրա մէջ. ոչ միայն ռուսները և վրացիները, բայց մինչև անգամ թուրքերը աւելի մեծ տոկոս են կազմում վարչական-ոստիկանական այն հիմնարկութիւններում, որոնց պարտաւորութիւնն է հալածել և արմատախիլ անել աւազակութիւնը: Բաւական է դիմել պաշտօնական տեղեկութիւններին, որոնք տպված են 1896 թի «Կովկասեան օրացոյցի» մէջ, համոզվելու համար, թէ որքան հշմարտութիւն կայ այն բամբասանքների մէջ, որոնցով աւազակութեան բազմանալը վերագրվում է այն հանգամանքին, թէ «հայերը գրաված ունեն պետական պաշտօնները»: Վերցնենք տեղեկութիւնները նահանգների համեմատ:

1) Թիֆլիսի նահանգ: Նահանգապետը վրացի է, փոխ-նահանգապետը—ռուս: Գաւառապետներից 5 վրացի են, 3 ռուս, 1 հայ. օգնականներից—4 հայ, 2 ռուս, 2 վրացի, երկու գերմանացի, 1 լեհ: Պոլիցիական պրիստաւներից 18 վրացիներ են, 5 ռուս, 3 հայ: Զէմստվօի պահակախմբի գլխաւորները—7 վրացի: Ուրեմն 55 անձինքներից ռուսները 11 են, վրացիները 33, հայերը 8, այսինքն հայերը կազմում են մօտ 14%:

2) Քութայիսի նահանգ: Նահանգապետը ռուս է, փոխ-նահանգապետը գերմանացի, չրջանապետներից և գաւառապետներից 8 վրացի են, 5 ռուսներ, 1 հայ. օգնականներից—6 վրացի, և 1 ռուս: Ուչաստկովի գլխաւորներից և պրիստաւներից 30 վրացիներ են, 4 ռուսներ, 2 հայ, 1 թուրք. միլիցիայի գլխաւորները—3 վրացի, 1 հայ:

Ուրեմն 64 անձինքներից 11 ռուսներ են, 47 վրացիներ, իսկ հայերը 4 են, այսինքն հայերը կազմում են 6,25%.

3) Բագուի նահանգ: Նահանգապետը գերմանացի է, փոխ-նահանգապետը—ռուս: Գաւառապետներից 5 ռուսներ են, 1 վրացի, պրիստաւներից 10 ռուսներ են, 3 վրացի, 4 թուրք, 1 հայ. զէմստվօի պահակի գլխաւորներից 6 թուրքեր են, 1 ռուս: Ուրեմն 38 անձինքներից ռուսները 22 են, թուրքերը 10, վրացիք 4, հայը 1, այսինքն հայերը կազմում են 2%:

4) Ելիսաւետպոլի նահանգ: Նահանգապետը վրացի է, փոխ-նահանգապետը ռուս: Գաւառապետներից 4 վրացիք են, 2 ռուս, 2 թուրք, օգնականներից 2 ռուս, 2 վրացի, 2 թուրք, 1 հայ. պրիստաւներից 14 թուրքեր, 7 ռուսներ, 4 հայ. զէմստ. պահակի գլխաւորներից 6 թուրքեր են, 4 վրացիք: Ուրեմն 52 անձինքներից 24 թուրքեր են, 12 ռուսներ, 11 վրացիք, 5 հայեր, այսինքն 10%-ից պակաս:

5) Երևանի նահանգ (աղգաբնակութեան մեծամասնութիւնը հայեր են): Նահանգապետը ռուս է, փոխ-նահանգապետը վրացի: Գաւառապետներից 6 ռուսներ են, 1 վրացի. օգնականներից 4 ռուսներ են, 1 վրացի, 2 հայեր. ուչաստկովի պրիստաւներից 10 ռուսներ են, 8 հայեր, 3 թուրքեր, 1 վրացի, 1 գերմանացի: Ուրեմն 39 անձինքներից ռուսները 21 են, հայերը 10, այսինքն հայերը կազմում են 23%-ից պակաս:

6) Դաղստանի չրջան: Հրամանատարն է 1 ռուս, օգնականներն են 1 ռուս, 1 հայ: Շրջանների գլխաւորներից 4 ռուսներ են, 3 վրացի, 1 հայ. օգնականներից 8 ռուսներ են, 1 վրացի: Ուրեմն 20 անձինքներից 14 ռուսներ են, 4 վրացի, 2 հայ, այսինքն հայերը կազմում են 10 տոկոս:

Այս առաջ բերած պաշտօնական ճիշդ թուականներից երևում է, որ ամբողջ Անդրկովկասի բարձր նահանգական վարչութեան մէջ եօթ նահանգապետների թւում (5 ռուսներ են, 2 վրացի) ոչ մէկը հայ չէ. 8 փոխ-նահանգապետներից և հրամանատարների օգնականներից (6 ռուսներ, 1 վրացի) միայն մէկն է հայ: Ապա բարձր գաւառական վարչութեան մէջ 51 գաւառապետներից հայերը 2 են, այսինքն 4%, 46 օգնականներից հայերը 8 են, այսինքն 13%: Ստորին վարչութեան և զէմստվօի պահակախմբի մէջ 178 պրիստաւներից վրացիները 75 են, թուրքերը 44, հայերը 19, այսինքն կազմում են 10%, թուով պակաս լինելով ոչ միայն վրացիներից, այլ և թուրքերից: Վերջնական եզրակացութեան մէջ ստացվում է, որ հայերի maximum վարչութեան մէջ—Երևանեան նահանգում, ուր ազգաբնակութեան մեծամասնութիւնը հայերն են, չէ անցնում տակաւն 25%-ից, այն ինչ Ելիսավետպոլի նահանգում վարչութեան մէջ ծառայող թուրքերի տոկոսը մօտ 50% է, չը խօսելով արդէն այն բանի մասին, որ զէմստվօի պահակախմբի ստորին պաշտօնեաները (չափարները) բոլորն էլ համարեա թուրքեր են: Իսկ ամբողջ անդրկովկասեան վարչութեան մէջ, 289 անձինքներից, հայերը 31 են, այսինքն 10,7 տոկոս, և նրանք, ինչպէս յայտնի է, մեծ մասամբ երկրորդական և երրորդական պաշտօններ են վարում: Եթէ խօսենք դատաստանական վարչութեան մասին, պաշտօններ ունեցող հայերի աւելի ևս պակաս տոկոս կունենանք: Թիֆլիսի ամ-

---

Մի փոքր յետոյ, Ալէքսանդր I, Թիւրքաց պատերազմի սկզբում առաջարկեց Աւստրիային գրաւել Բոսնիան, Սերբիան և Կրօատիան, մինչ Ռուսաստանը կը գրաւէր Դանայեան իշխանութիւնները:

Կրիմի պատերազմի սկզբում Նիկոլայ կայսրը, անգլիական դեսպան Սէյմուրի հետ ունեցած յայտնի խօսակցութեան ժամանակ (1853 թ. յունվարի 9) չոչափեց և Թիւրքիան բաժանելու հնարաւորութիւնը Ռուսաստանի, Անգլիայի և Աւստրիայի մէջ, բացառութեամբ Ֆրանսիայի: «Օսմանեան կայսրութեան գոյութիւնը, ասաց կայսրը, կարելի է համբերել, բայց ոչ ամրացնել նրան: Դանայեան իշխանութիւնները իրողապէս անկախ են և գտնվում են իմ հովանաւորութեան տակ: Այդ կարող է շարունակվել և այսուհետև: Սերբիան և Բոլգարիան կարող են կառավարութեան նոյնպիսի ձև ստանալ: Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ես հասկանում եմ նրա նշանակութիւնը Անգլիայի համար. նոյնը կասեմ Կանդիայի մասին: Այդ կղզին ձեզ պէտք կը գայ և ես պատճառ չեմ գտնում, թէ ինչու նա չէ կարող անգլիական լինել: Ես ձեզ առաջարկում եմ ոչ թէ համաձայնութիւն, դաշնագիր, այլ մտքերի ազատ փոխանակութիւն և ծայրայեղ դէպքում ազնիւ մարդու խօսքը: Մեր մէջ բաւական է և այդ»:

Անգլիան, ինչպէս յայտնի է, այդ ծրագիրը մերժեց և նախապատ համարեց Ֆրանսիայի հետ դաշնակցութիւն կապելը:

Օսմանեան կայսրութեան բաժանման ծրագիրները առաջարկվել են շատ անգամ և մասնաւոր անձերի կողմից, մեր օրերում: Կարելի է ասել, որ բաժանումը արդէն սկսվել է. Աւստրիան հաստատվել է Բոսնիայում և Հերցէգովինայում և աչքը անկել է, ասում են, նաև Սալոնիկի վրա: Իտալիան ցանկութիւն է յայտնում ընդարձակել իր երկիրները Աղրիատիական ծովի ափերում, միացնելով իր հետ Ալբանիան: Անգլիան կառավարում է Կիպրոսը և գրաւել է Եգիպտոսը, որով միշտ լարված յարաբերութեան մէջ է գտնվում Ֆրանսիայի հետ: Բոլոր այդ գրաւումները և նրանց ծրագիրները չեն համապատասխանում ոչ Բալկանեան ազգութիւնների խաղաղութեան, ոչ էլ Եւրոպայի ընդհանուր խաղաղութեան և բարիքին: Լինելով իրաւունքի կոպիտ խախտումներ, նրանք միայն աճեցնում են մեծ պետութիւնների մէջ փոխադարձ անվստահութիւն և թշնամութիւն, որը թոյլ չէ տալիս նրանց դնել մասամբ պակասեցնել իրանց զինաւորութիւնը:

Եթէ չէ կարելի լուրջ կերպով խօսել Թիւրքիայի կենսունակութեան մասին, ուրեմն նրա նախկին և այժմեան մասերի բաժանումը ինչ ձևով և լինի և ում մէջ էլ կատարվի այդ բաժանումը, բարոյականութեան և իրաւունքի հիմնական սկզբունքների ծանր խախտումն պէտք է նկատել: Թիւրքիայի նահանգներում բնակվող քրիստոնեաները մեռած մթերք չեն, որի հետ կարելի լինի վարվել ինչպէս ուզում են, առանց իմանալու նրանց կարիքը, ցանկութիւնները և իրաւունքները: Ժամանակակից միջազգային և պետական իրաւունքը հերքում է նահանգները լոկ իբրև «աշխարհագրական» միութիւններ նրկատելու գաղափարը և այդ գաղափարի տեղ դնում է «ազգայնութիւն» և «ազգեր» հասկացողութիւնը:

Եւ Թիւրքիայում, նրա քայքայման պրոցէսի հետ համահաւասար ընթանում է մի ուրիշ, թէև դանդաղ և հիւանդոտ պրոցէս, այն է նոր քաղաքական մարմինների կազմութեան պրոցէսը:

4) Այդ հետաքրքիր երեոյթը առաւելապէս մեր դարի արդիւնքն է: Թէ որքան ինքնուրոյն մասերի կը բաժանվի ժամանակակից Թիւրքիան,—անհնար է այժմ ասել: Բայց նրա տեղ նոր քրիստոնեայ պետութիւններ հաստատելու միտքը առաջ ևս յաճախ էր յայտնվում: 1828 թի մարտին կոմս Կապոդիստրիա վերև յիշած զաղտնի կոմիտեին նել կայացրեց Բալկանեան թերակղզու քաղաքական վերակազմութեան հետեւեալ ծրագիրը: Օսմանեան կայսրութեան տեղ Եւրոպայում հիմնվում են հինգ նոր երկրորդական պետութիւններ. 1) Դակիա, որ բաղկացած կը լինի Մոլդավիայից և Վալախիայից. 2) Սերբիա, որ բռնում է բացի այդ երկրից նաև Բոլգարիան և Բոսնիան. 3) Մակեդոնիա, որի մէջ կը մտնեն, բացի բուն Մակեդոնիայից՝ Թրակիան և Արշիպելագոսի չատ կղզիները (Խիոս, Սամոթրակիա և Թազոս). 4) Եպիր, նոյն անունով գաւառների և Ալբանիայի հետ և վերջապէս 5) Յունաստան: Այդ հինգ թագաւորութիւնների գահերի համար ընտրվում են, մեծ պետութիւնների համաձայնութեամբ, իշխաններ Եւրոպայի երկրորդական թագաւորական տներից և այդ տէրութիւնները կազմում են իրանց մէջ դաշնակցութիւն, որի մայրաքաղաք նշանակվում է Կ. Պոլիսը, որը մի և նոյն ժամանակ յայտարարվում է ազատ քաղաք, կցելով նրա հետ մի կտոր հող:

Վերջին կէտը քննադատական նկատողութիւն առաջ բերեց Պոցցո-դի Բորգոյի և Դաշկովի կողմից, որոնք գտնում էին, թէ ներկայ պայմաններում, Կ. Պոլիսը փակելով նեղուցները, չէ կարող պաշտպանել Ռուսաստանի Սև ծովի ափերը թշնամու նաւատորմի յարձակումներից:

Ինչ և իցէ, բայց հետաքրքրական է, որ ապագայում, յոյն հայրենասէրի այդ գաղափարներից շատերը իրականացան: Յունաստանի ազատութիւնից չատ յետոյ՝ Բէրլինի դաշնագիրը 1878 թի՝ անկախ ճանաչեց Ռումինիան, Սերբիան և Չերնոգորիան: Բացի դրանից այդ դաշնագիրը ճանաչեց և բոլգարական իշխանութիւնը ու վարչական ինքնավարութիւն տուեց Սրեելեան Ռումէլիային:

(Կը շարունակվի)

բողջ դատաստանական պալատում ոչ մէկ հայ անդամ չը կայ. անդրկովկասեան 5 նահանգական դատարաններում երեք հայ անդամներ կան, որ կազմում է 3%։

Ահա, ուրեմն, ինչ է նշանակում, թէ «հայերը գրաւել են պետական պաշտօնները». 390 անձինքների վրա գալիս է 34 մարդ։ Կովկասեան կառավարչական հիմնարկութիւնների մէջ այդ 34 հայ պաշտօնեաների ներկայութիւնն է պատճառ, «Моск. Вѣдомости» լրագրի ասելով, որ աւազակութիւնը զարգանում է Կովկասում։

Այդ հաստատիչ օրինակը ակնյայտնի կերպով ապացուցանում է, թէ ինչ անմիտ հետեւանքներին է բերում, երբ մարդիկ յափշտակվում են ցեղական հալածանքներով և երբ կամենում են ներքին կեանքի սովորական հարցերը լուծել տեղական նախապաշարմունքների և հաշակաւոր «սեպարատիզմի» հողի վրա։ Եթէ Կովկասեան աւազակութեան զօրեղանալու պատճառների բարդ հարցի մէջ տեղական վարչութեան էթնոգրաֆիական կազմութիւնը որ և է դեր է խաղում, այն ժամանակ ամենահամեստ յարգանքը դէպի արդարութիւնը պարտաւորեցնում է խոստովանել, որ հայերը այդտեղ ոչ մի մեղք չունեն, որովհետեւ նրանք ոչ միայն «գրաւած չունեն պետական պաշտօնները», բայց շատ անելիք տեղ են բռնում նրա մէջ։ Ոչ միայն ռուսները և վրացիները, այլ և մինչև անգամ թուրքերը երկու անգամ աւելի տեղեր ունեն պետական այն ծառայութեան մէջ, որը չփոխնունի աւազակութեան գործերի հետ, քան հայերը։ (Русск. Вѣд.)

Գ. Ջ.

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՅՈԳՈՒՏ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
(Նամակ Եկատերինոդարից)

Յունվարի 12-ին

Հիւսիսային Կովկասի եկեղեցիների բարեկարգութեան վերատեսուչ Բագրատ արեղայ Վարդապետեան յունվարի 4-ին Եկատերինոդար գալով, յունվարի 5-ի երեկոյեան և 6-ի առաւօտեան, եկեղեցում, ողողված քարոզ խօսեց հայաստանցի գաղթականների և նրանց չուտափոյթ օգնութեան հասնելու մասին։ Իսկ յունվարի 7-ին Բագրատ արեղան դիմեց նակաղօի ատամանին և խնդրեց թոյլատրութիւն ժողովարարութիւն անելու։ Պ. Ատամանը, համաձայն Բարձրագոյն հրամանի, իրաւունք տուեց ազատ շրջելու և փող ու չորեր ժողովելու։

Նոյն երեկոյին մի քանի պարոններ, տիկիններ և օրիորդներ ժողովարարութիւն անելու համար խմբեր կազմեցին։ Հետեւեալ օրը՝ յունվարի 8-ին, ինքն Բագրատ արեղան, պ.պ. Ս. Խարագիւլեանի, Գաբ. Թորոսեանի և Լ. Միչվելեանի հետ սկսեց շրջել խանութները։ Իսկ տիկինները և օրիորդների խմբերը, որոնց մասնակցում էին տիկիններ՝ Թորոսեան, Խարագիւլեան, Լուսիկեան, Բաշմակեան, Փիրումեան, Խաչաղբաշեան և օր.օր. Գրիգորեան, Թօխեան, Սերմաքեշեան և Զբրօկվերցիեան շրջեցին տները։ Եւ այսպիսով երկու օրվայ ընթացքում հաւաքվեց՝ 3,450 ր. փող և մօտ 600 բուրլու պատրաստի և անպատրաստ հագուստեղէն։

Աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերելու հաւաքած հագուստների ցուցակը և քանակութիւնը. մուշտակ 2 հատ, տաք վերմակներ 23, կանանց իւրկաներ 36, կօֆտաներ 30, տղայոց չորեր 90, կանանց վերնազգեստներ 10, մանուկների վերնազգեստներ 13, մարդկանց անդրավարտիքներ և վերնազգեստներ 15, զանազան սպիտակեղէններ 27, մեծ և փոքր գլխարկներ 13, փոքր բարձ 2, գլխի շալեր 17, ժիլետներ 13, թաղիքիա ճակատոր ոտնամաններ 10 զոյգ, ոտնամաններ հասարակ 70 զոյգ, գուլպաներ 47 զոյգ։ Բացի սրանից հաւաքված են զանազան տեսակ անպատրաստի կտորներ մօտ 1300 արշին։

Ա. Տէր-Խաչատրեանց

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յունվարի 14-ին

Այսօր ուղարկեցինք Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեանը այստեղի հայ հասարակութիւնից հաւաքած հինգ հակ և մի փոքր կապոց չորեր։ Ընդամենը 729 կտոր է, հին և նոր, երկու սեռի ամեն հասակի համար։ Տղամարդկանց զգեստներ՝ անդրավարտիք—40 հատ, սերտուկ և պիջակ—30, ժիլետ—30, արխալուղ 7, չուխայ—9, վերարկու—13, եափնջի—1, չալիկ և վարտիք—50։ Կանանց զգեստներ՝ իւրկա—34, կօֆտա—59, վերարկու—12, չալ (մեծ և փոքր)—17, ֆուֆայկա—6, ճերմակեղէն 37։ Երեխաների զգեստներ. տղաների համար՝ անդրավարտիկ—9, բլուզ—19, չուխայ—4, եափնջի—2. աղջկերանց համար—209 կտոր։ Երեսսրբիչ—1, երեխայի վերմակ—1, վերմակալ—1, մեծ վերմակ—1, վերմակալ—1, սղեգ—1, մեծ սփոռոց—կօշիկ և կալոշ (մեծ և փոքր)—52 զոյգ, գլխարկ (մեծ և փոքր)—39, գուլպայ (մեծ և փոքր)—30 զոյգ։ Սաֆիանի հողմամփեր—13 զոյգ։

Շնորհակալութիւն այստեղի հայերին, որոնք ամենայն ուրախութեամբ իրանց ունեցածից բաժին են հանում իրանց անտուն, անտէր, հայրենիքից հալածված, օտարութեան մէջ պանդխտող, քաղցած, ծարաւ եղբայրներին։ Առանձնապէս շնորհակալութիւն տիկին Շալասեանին և օր. Աչակեանին, որոնք սիրով յանձն առան շորերը կարգի բերելու և դասաւորելու։

Տէր-Յովհաննէսեան
Մէլիք-Սարգսեան

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Դեկտեմբերի 31-ին

Կատարվում են գործակալների և առաջնորդների փոփոխութիւններ. Սուրմալուի գործակալ Հմայեակ վարդապետ Արշարունուն արձակելով՝ նրա տեղ կարգել են Հախվերիս գիւղի ծխատէր անդրադէտ և իր քաջագործութեամբ յայտնի քահանային. Վաղարշապատի և Սարդարաբադի գործակալութիւնը առել են Գրիգոր վարդապետից (Պաչենուց) և տուել են այստեղի քահանաներից մէկին՝ տէր-Արսէնին։ Այս դէպքը մենք արձանագրում ենք այն պատճառով, որ մի քանի ժամանակ առաջ աշխատում էին գործակալ քահանաների տեղ կարգել վարդապետներ, իբրև աւելի պատրաստ այդ պաշտօնի համար, բայց այսօր նորից քահանաներ նշանակելով՝ ապացուցին, որ անպատրաստ քահանաներն աւելի պատրաստ են, քան թէ իրանց վարդապետները...

Շամախու առաջնորդ Մակար եպիսկոպոսը կանչված է Էջմիածին և սրբազանն այժմ այստեղ է, բայց դեռ յայտնի չէ թէ ինչ պաշտօն պիտի տան նրան։ Մենք կարծում ենք, որ բաղմամիւռ նախկին թեմական սրբազանների շարքում նրան էլ կը դասավարեն պարապ անցկացնելու։ Շամախու նոր առաջնորդ Կարապետ եպիսկոպոսն այստեղ է. կոնդակը վաղուց է ստացել, բայց կարծես պարապութեան այնքան վարժվել է, որ դժուարանում է բաժանվել վանքից, իր սիրելի միաբանակիցներից։ Բայց, մեր կարծիքով, սրբազանը պիտի չտապի. Շամախու թեմն էլ թէև փոքրիկ է, բայց ունի բազմաթիւ տիրացուներ, որոնք ձեռնադրողի են սպասում։

Ո՞վքեր են լինելու վանական կառավարութեան անդամներ եկող տարվայ համար։ Այժմ չը կայ վանական կառավարութիւն. ամբողջ կառավարութիւնը կազմում է Աչոռ վարդապետ Շահեան, որը Վեհափառից անցեալ տարի կարգված է եղել յիշեալ կառավարութեան նախագահ, իսկ այժմ, չար լեղուներ ասում են, Նորին Վեհափառութիւնը չէ ցանկանում նրան թողնել իր պաշտօնում, իսկ Աչոռ վարդապետի ընկերները վաղուց հրաժարված են։ Վանական կառավարութիւնը ամենաիւղալի տեղն է, ուր շատերը այժմեան եպիսկոպոսներից «իրանց հաւաքել են», այդ պատճառով շատերը աչք ունեն անդամ լինելու. ի հարկէ, դրանցից ամեն մէկը խօսում է յօգուտ վանքի և ինքը ներկայանում է որպէս վանքի շահերի պաշտպան, և հէնց դրա համար միայն ցանկանում է վանական կառավարութեան անդամ լինել։ Շիտակ է, շիտակ, ով է ձեր գրպանն ու էջմիածնի գանձարանը ջոկել իրարից. դրանք միշտ սերտ յարաբերութեան մէջ են եղել և պիտի լինեն յաւիտեան...

Վանքի ագարակի (պլան) կառավարիչն էլ փոխվեց։ Սխալ ասեցի, այստեղ փոխվել, հրաժարվել, հեռանալ չը կայ. այստեղ կայ միայն արձակել, հեռացնել, և ճշմարիտ, պլանի կառավարիչ վարդապետին, որ երկու ամիս չը կայ նշանակվել է, արձակեցին։ Թէ ում կը դնեն տեղը, յայտնի չէ։ Հիւրընկալ Գէորգ վարդապետին հեռացնելը կարդացինք Էջմիածնի օրդան «Արարատում», բայց մի ուրիշ բան այնտեղ չը կար գրած, որը de facto իրականութիւն է. յիշեալ հիւրընկալը Ղազարապատի իրեղէնները ներկայացնելիս՝ ասիս է և 4 կապերտ, որ երբ իրար կողքի ես դնում, հաղիւ մի իսկական է դուրս գալիս. սա, ի հարկէ, վանական հանելուկ է, մէկից չորս ստեղծել և երեքը կլանել...

«Արարատ» ամսագիրն էլ երևի մեծ փոփոխութեան է ենթարկվելու։ Այժմեան խմբագիրը թէև ձախ ձեռքով է ղեկավարված, բայց անպարմար է համարվում խմբագրի կոչման համար, թէև աջով նա քաջութիւն ունի պաշտպանվելու, և, ի հարկէ, քաջութիւն կունենայ իր փառքը գողացողին հրապարակ հանելու, բայց «Արձագանքի» մէջ գրած իր յօդուածով նա չը կարողացաւ մի մաղի չափ անգամ փոխելու եղած որոշումը։ Պ. Քարամեան 1897 թւի համար «Արարատի» խմբագիր չի լինի. բայց արի տես, որ առածը՝—«չիք չարիք առանց բարեաց», մենք պիտի այսպէս ասենք՝—«չիք բարիք առանց չարեաց։» Բարիք էր Քարամեանին հեռացնելը, բայց երբ մտածում են խմբագրական մասնաժողով կազմել այնպիսի անձինքներից, որոնք ոչ մի կապ չունեն մամուլի հետ, դա աւելի քան չարիք է։

Վանքի պլանում տեղաւորված գաղթականները ցրված են Վաղարշապատի գիւղերում. սրանցից ոմանք մի քանի ռուբլի, ոմանք մի քանի արշին կտաւ, կամ բամբակ առնելով զբաղեցել են և այժմ մօտ 1100 հոգի ծանրացել են Բարեգործական ընկերութեան այստեղի ճիւղի վրա, բայց վանքը չէ զլանում իր արբանեակների միջոցով տարածել, թէ դրանց թշուառութիւնը սփոփողը վանքն է։ Երանի թէ սփոփված լինէին, կարիքները լրացրած, թող փառքը վանքն ստանայ. խօսքով մերկութիւն չի ծածկվի և փոր չի կշտանայ, հաց ու չոր տուէք նրանց...

Х.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Յունվարի 9-ին

Ինքնավարութեան և քաղաքագլխի հարցը հետզհետէ դառնում է օրվայ հարց, և նրանով սկսում են հետաքրքրվել շատերը։ Այս հետաքրքրութիւնը իրաւացի նախանձելի երևոյթ կը լինէր Ալէքսանդրօպոլի համար, եթէ նա հիմնված լինէր միմիայն մաքուր խղճի, ազնիւ ընկերութիւնների և ժողովրդական իսկական շահերին ծառայելու գաղափարների վրա։ Բայց, տարաբաղդաբար, այդ չէ նկատվում ոչ նրանց մի մասի մէջ, որոնց ձեռքում գտնվում է ընտրութեան ղեկն ու իրաւունքը, և ոչ էլ նրանց մէջ, որոնք մամուլի և տպագրական խօսքի միջոցով ձգտում են արծարծել և պարզաբանել հարցը։

Հէնց առաջին քայլից սկսած մեր մամուլի որոշ մասում յայտնվեցին զանազան անսատարգիր նամակներ և լուրեր, որոնց հեղինակները իրանց վայել ծամածռութեամբ՝ շարժեցին հասարակութեան մի մասի արդար զայրոյթը և միւսի վայրենի քրքիջները։ Նա. ով ծանօթ չէ Ալէքսանդրօպոլին, ով անտեղեակ է նրա ժտաւոր վիճակին, նա չէ կարող երևակայել, թէ մեզանում ինչ հետաքրքրութեամբ և բաւականութեամբ են կարդացվում այդ տեսակ գրուածքները, որոնք իսկապէս զայրոյթ պէտք է շարժէին։ Արդեօք մեր հասարակութեան այդ մասի դրութիւնն է աւելի ցաւալի, թէ այն լրագիրների, որոնք մեծ հիւրասիրութեամբ տեղ են տալիս այդ տեսակ անմիտ «խաղերին»։ Մենք կարծում էինք, թէ մեր ինտելիգենտ դրողը մէկ կողմ պէտք է թողնէր սրան կամ նրան անիրաւացի կերպով անուանարկելու պատմական սովորութիւնը, խոյս պէտք է տար այս և այն անձի հասցէին անմիտ փառաբանութիւններ և խնկարկութիւններ անելուց, և հիմնվելով արդարութեան վրա, պէտք է պաշտպանէր իր ընտրելին, իր բոլոր գործերում առաջնորդ ունենալով համակրած անձի գործերն ու հասարակական դիրքը։ Բայց, տարաբաղդաբար, մինչև այսօր նկատվում է միմիայն հին կուսակցական նեղ հայեացքն ու խընդրին վայր ի վերոյ վերաբերվելու անտեղի հակումը, որը պատիւ չէ կարող բերել ոչ մի թղթակցի։ Այդ տեսակին պատկանող մի յօդուած էր, որ վերջին օրերս լոյս տեսաւ Թիֆլիսի թերթերից մէկի մէջ, որը, նպատակ ունենալով մեզանում մեծ համակրութիւն վայելող պ. Պապաջանեանի և ուրիշ մի քանի պարոնների պատիւը չոչափել, անմասաբար և նոյն իսկ ծիծաղելի կերպով գովաբանել էր մի այլ քաղաքացու, որի հասարակական գործունէութեան մասին ոչ ոք ոչինչ չէ լսել։ Սակայն սա չնչտ պէտք է այսպէս տեի. հաւանական է շատ, քանի կայ գրիչ և թուղթ, քանի կան թղթակիցներ, որոնց խելքի աստիճանը ջիւանեան գրականութիւնից այն կողմը չէ անցնում, քանի որ կայ «հասարակական» շահերին նուիրված թերթ, որի մէջ ամեն բան կարելի է գտնել, բացի ազնուութիւնից և ճշմարտութիւնից։

Ի զէպ, պէտք է աւելացնենք, որ թէև առժամանակ չէ կարելի ճիշդ կերպով մատնացոյց անել քաղաքագլխութեան կանդիդատներին, բայց ամենից շատ խօսվում է պ.պ. Պապաջանեանի, Տիգրանեանի, Պ. Զիլիոդցեանի և Գ. Տէր-Պետրոսեանի մասին։

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի 6-ին

Հայ դերասանների մի խումբ, տիկին Աբեսեանի ղեկավարութեամբ, յունվարի 4-ին Թաղիեվի թատրոնում տուեց իր առաջին ներկայացումը։ Խաղացին «Ժան-Բոդրի», չորս գործողութեամբ մի կոմէդիա-դրամա, որը խաղացվում է այստեղ առաջին անգամ։ Զը նայելով որ վաղուց այստեղ հայերէն ներկայացում չէ եղել, այնու ամենայնիւ թատրոնը կէսից աւելի դատարկ էր. մուտքը 200 բուրլուց չէր անցնում։

Եթէ այս խմբի փոխարէն լինէր մի ուրիշ խումբ, թերևս հէնց առաջին ներկայացումից հիասթափվէր բագուցիների այս սառն ընդունելութիւնից։ Բայց այս առաջին անգամը չէ. խմբի անդամների մեծագոյն մասը այստեղ տարիների ընթացքում համարեա պարբերաբար ենթակայ է եղել այդ տեսակ սառն անտարբերութեան։ Տեղական այժերով տրվող ներկայացումները բաւականութիւն չեն պատճառում մեր հասարակութեան։ Տարիների փորձերն այդ են ապացուցանում։ Մօտիկ անցեալում մի անգամ միայն հայ դերասանական խումբը աջողութիւն ունեցաւ այստեղ, այն էլ բացառապէս դերասանուհի Սիրանոյշի շնորհիւ, որը մասնակցում էր ներկայացումներին։ Այդ ժամանակ ոչ միայն թատրոնը լիքն էր լինում միշտ, այլ և տոմսակ գտնել չէր լինում, այնքան շատ էր ցանկացողների թիւը։ Այդ երևոյթը կրկնվել է միշտ և ամեն տեղ, երբ խմբի մէջ եղել են աչքի ընկնող այժեր։ Ցիշենք մեր թատրոնական կեանքի փառաւոր անցեալը, հանգուցեալ Ադամեանի մասնակցութեան անմոռանալի տարիները։ Այն ժամանակվայ ներկայացումները կախարդելու չափ գրաւում էին հանդիսականներին։ Մի անգամ թատրոն ընկնողը կամայ ակամայ հարկադրվում էր և՛ երկրորդ, և՛ երրորդ անգամ գնալու, և՛ շարունակ ներկայ լինելու։ Փող չունեցողը պարտք էր վերցնում, լեզու չիմացողը—լեզու էր սովորում՝ թատրոն գնալու, Ադամեանցի ներկայացումները լաւ ըմբռնելու համար։ Այն ժամանակ յիրաւի, ամենայն իրաւունքով կարելի էր ասել, որ թատրոնը իր կոչման բարձրութեան վրա է կանգնած, որ նա նպատակի է ծառայում, իսկ այժմ... ծանր է ասել, հայոց թատրոնը միմիայն կարեկցութիւն է զարթեցնում։ Եւ եթէ ամեն անգամ մէկ ու կէս մարդ է յաճախում թատրոն—այդ էլ «խաթեր իշուն», նիւթականապէս օգնած լինելու գիտաւորութեամբ։ Պէտք է այդ խղճալի դրութիւնից հանել, ոտի կանգնեցնել թատրոնը և բուն նպատակի ծառայեցնել։ Այդ աւելի քան անհրաժեշտ է մանաւանդ ներկայ պայմաններում։

Բայց ինչպէս անել. գործնական ինչ միջոցներ ձեռնարկել։ Միացեալ ուժերով, ընկերակցութեամբ գործ առաջ տանել, հաղիւ թէ աջողվի։ Վերջին տարիների փորձերը պերճախօս ապացոյցներ կարող են լինել։ Հայկական մեծամտութիւնը, հեղինակութիւն չը ճանաչելը այնքան խոր արմատներ են դրել մեր դերասանների մտքի ու հասկացողութիւնների մէջ, որ ամէն մէկը առանձին-առանձին վերցրած իրան ամենաընդունակ ու տաղանդաւոր է երևակայում և հետևապէս աւելորդ՝ ուրիշին լսելու, բէժիսորի, ընկերների խորհուրդներին ականջ դնելու... Այս դրութեան մէջ անկարելի է ընկերական սկզբունքներով կարգին գործ առաջ տանելու վրա յոյս կապել։ Պէտք է կազմակերպել թատ-

բոնական առանձին վարչութիւն և հաստատուն որոշ պայմաններով դերասաններ խմբել, լաւ ոյժեր հրաւիրել։ Հրաւիրված դերասաններին անհրաժեշտ է ապահովացնել առնուազն մի տարով, եթէ ոչ աւելի։ Պէտք է դրամագլուխ՝ ապահովութեան և սկզբնական ծախքերի համար։ Մի քանի հազար բուբլի ձեռք բերելը Բագուի պէս քաղաքում, այն էլ ներկայ հանգամանքներում, դժուար գործ չէ։ Հարկաւոր է նախաձեռնութիւն և հոգացողութիւն։ Նոյն իսկ նախապէս «աբոնեմենտներ» գտնելով կարելի է լրացնել ըսկզբնական անհրաժեշտ պիտոյքները, եթէ հրաւիրվող դերասանների կամ դերասանուհիների մէջ լինեն յայտնի ոյժեր։ Մի մասնաւոր մարդու նախաձեռնութեամբ հրաւիրված է այստեղ օպերային խումբ՝ ներկայացումներ տալու համար։ Խումբը կազմված է յայտնի ոյժերից, որոնց թըւումն է նաև օր. Պապայեանը, որը, ի դէպ ասել, այստեղ ևս մեծ հաջաւ ունի։ Աջողութիւնը արդէն իսկ ապահովված կարելի է համարել։ Չը նայելով որ խումբը իր ներկայացումները պիտի սկսէ մեծ պասին, արդէն 5000 բուբլու չափ «աբոնեմենտներ» են վաճառված և փողը ապահովութեան համար, համաձայն պայմանի, գցած է բանկը։ Նախաձեռնողը, անկասկած, ոչ միայն կը ծածկէ ծախքերը, այլ և լաւ վաստակ կունենայ, ինչպէս որ ունեցել է նախընթաց տարին։ Նոյն կերպով կարելի է ապահովացնել և հայոց թատրոնի գործը, եթէ ձեռնհաս մարդիկ ստանձնեն նախաձեռնութիւնը։ Ուրիշ կերպ ոչ մի ցանկալի հետևանքի չէ կարելի հասնել։

Ներկայ խումբը՝ չը նայելով, որ ունի այնպիսի փորձված դերասաններ, ինչպէս պ. Աբելեան, Վրոյր և ուրիշները՝ իր առաջին ներկայացումով առանձին տպաւորութիւն չը թողեց։ Ակնջ էին ծակում խորթ դարձուածքներ, որ շարունակ կրկնվում էին. օրինակ «բանաստեղծական աղջիկ չեմ ես», «չեք խանգարվում իմ ներկայութիւնով», «մատս մի քիչ քերթվել է» և այն և այլն։ Անտանելի էր նոյնպէս յուշարարը։ Ամբողջ ժամերով դատապարտված էինք նախ յուշարարի թելադրածը լսել՝ ապա դերասանների կրկնածը վայելել...

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 15-ին

Վիէննայի «Հանդէս Ամսօրեան» ցոյց տուեց, որ նեղսրտութեան կողմից չէ ուզում յետ մնալ իր վանական միւս եղբայրակիցներից՝ «Արարատից» ու «Բազմավէպից»։ Նա այնքան կատաղել է իմ մի փոքրիկ նկատողութիւնից, որ մոռացել է «ուսումնական» հանդէսի օլիմպիական բարձրութիւնը և բոլորովին ոչ-ուսումնական ձևերով աշխատում է համոզել ինձ, որ Մխիթարեան հայրերի մասին կարելի է գրել միմիայն գովասանք։ Իսկ ասել թէ Մխիթարեանները ժամանակի պահանջներին չեն հետևում, ասել թէ՝ մինչդեռ մեր ժողովուրդը կարդալու գիրք չունի, Մխիթարեանները միմեանց ետևից հրատարակում են միայն մի քանի տասնեակ մարդկանց մատչելի հնութիւններ և հնախօսութիւններ,—ինչպէս ես էի ասել,—այդ, առնուազն, յանցանք է։

Խոստովանում եմ որ ես մեղք գործել եմ, ենթադրելով թէ Մխիթարեանների հարուստ տպարանները կարող են Եւրոպայի լուսաւորութեան և հայ ժողովրդի մէջ միջնորդ հանդիսանալ։ Ես կարծել եմ թէ դա մի շատ պատուաբեր, շատ մեծ գործ կը լինէր և Մխիթարեան հայրերը ընթերցող հասարակութեան սէրը և համակրանքը կը գրաւէին։ Բայց վերապատուելի հայրերը չատպում են հասկացնել, որ այդպիսի ենթադրութիւններ ու կարծիքներ ունենալը մեղք է։ Վատ բան է եղել իմ ենթադրութիւնը թէ Մխիթարեանները կարող են լրացնել այդ մեծ պահանջը, պատով տանել ժողովրդական այդ ահագին գործը։ Ես համարձակվեցայ չափից դուրս մեծ կարծիք ունենալ Մխիթարեան հայրերի վրա, և ահա դրա պատճառով յանցաւոր եմ համարվում։

Բայց թող ներէ ինձ «Հանդէս Ամսօրեան», եթէ ես ասեմ, որ այդ մոլորութեան մէջ ինձ գցել է նա ինքը։ Տարիների ընթացքում նա տալիս էր չոր ու ցամաք ուսումնասիրութիւններ և բացի Ագաթանգեղոսներից, սուտ և իրական Կալեսթինէսներից ոչինչ չէր ընդունում։ Ճիշդ է, նա մի քանի հատ «մանագէտներին» հիացնում էր դրանով, բայց ինքը, ամսագրի խմբագրութիւնը զգում էր, որ անկարելի է քարանալ միմիայն հնութիւնների շրջանում, որ կայ ընթերցող հասարակութիւն, որը գլուխ չէ պատռում հնադարեան այս կամ այն հեղինակի մի բառի, շատ անգամ և մի տառի վրա, այլ կարդալու նիւթ է պահանջում։ Եւ ահա «Հանդէսի» մէջ բացվեց առանձին բաժին—ընթացիկ կեանքի տեսութիւն, որի մէջ տեղ է բռնում նոյն իսկ լրագրական բանակռիւը։—Մենք չնորհաւորեցինք այդ յաղթութիւնը, որ տարաւ կեանքի պահանջը այնպիսի միջնավայրում, ուր միմիայն չոր մատնագիտութիւնն էր հաստատուն։ Եւ հաւատացած ենք, որ «Հանդէսի» խմբագրութիւնը այսուհետև էլ կը դդայ, որ իրան հարկաւոր է ընթերցողների աւելի և աւելի լայն շրջան, ուստի և աւելի մեծ տեղ կը տայ ընթացիկ կեանքի տեսութեան, աղատելով նրան այն կապանքներից, որոնք կարծես թէ Բոսֆորի դրաքննական ատեաններից թռել են Վիէննա և ծանրացել են Մխիթարեանների գրչի վրա։

Այդ նորութիւնը, որ մենք ողջունել ենք և միշտ կողջունենք, մեզ առիթ էր տալիս այսպէս մտածելու. արդեօք ժամանակ չէ, որ Վիէննայի և Վենետիկի տպարանները տան մեզ, ընթերցողներիս ահագին բազմութեան, այնպիսի գրքեր, որոնց թղթերը մենք կտրատէինք մի առանձին հետաքրքրութեամբ. արդեօք ժամանակ չէ որ Մխիթարեան հայրերը բաւական համարեն բացառապէս գիտնականներին, այն էլ երեք ջուխտ գիտնականներին, հիացնելը և ըսկսեն մի քիչ էլ հիացնել մեզ, ընթերցողներիս. փառք Աստուծու, նրանք նստած են Եւրոպայում, լեզուներ գիտեն, պատրաստութիւն ունեն, գեղեցիկ, խելօք գրքերի պակասութիւն չը կայ, իսկ մենք որքան կարօտ ենք այդպիսի գրքերի։ Ասացէք, վերապատուելի հայրեր, միթէ վատութիւն էր, երբ մենք ցանկանում ենք, որ դուք կարդալու գրքեր ապէք և ուղարկէք մեզ...

«Հանդէսը» ասում է, որ վատութիւն է։ Ուստի մենք էլ կասենք մեր իմացածը։ Հաւատում ենք, որ Վիէննայի տպարանը կարող է տարեկան չորս հինգ և աւել «Ցուցակ ձեռագրաց» հրատարակել։ Մատնագիտութեան տեսակէտից այդ ցուցակները հրաշալի բաներ են։ Բայց մեզ հետաքրքրող հարցի տեսակէտից, այսինքն ժողովրդի զարգացման և ժողովրդական ընթերցանութեան տեսակէտից, մենք ասել ենք և կասենք, որ, դժբաղդաբար, այդ հիանալի գործերի մէջ չը կայ և տասն էջ գրութիւն, որ հետաքրքրական, մատչելի լինի ընթերցողներին։ Մենք չենք ծածկի, որ մեր գրականութեան բոլոր ճիւղերը անշարժ ու քարացած են, և ծաղկում է միմիայն հնախօսութիւնը, մի առարկայ, որ բոլոր միւս ազգերի մէջ զբաղեցնում է միմիայն գիտնականների մի նեղ շրջանը, իսկ մեզ մօտ հասարակութեան վզին է փաթաթվում։—Հինը հասկանալու համար պէտք է որ նոր բաներ շատ հասկացած լինենք։ Գոնէ աշխատեցէք նորերի վերաբերմամբ տալ այնքան, որքան տալիս էք հների վերաբերմամբ։

Այս էր իմ միտքը։ Մատնագէտները կը ծաղրեն նրան, բայց հասարակ ընթերցողը, որ աչք անկած սպասում է թէ ինչ կը տայ հայ մամուլը, ինձ լաւ է հասկանում։—Եւ այսքան հասարակ մի խնդրի առաջ Վիէննայի Մխիթարեանները այնքան գլուխ են կորցրել, որ ասում են թէ «Մշակից» չէին սպասում այնպիսի մի նկատողութիւն, որի մէջ ասված լինէր թէ Մխիթարեանները ժամանակի պահանջից յետ են մնացել։ Սխալվում էք։ Թերթեցէք «Մշակի» 1878 թւականի համարները, կարդացէք թէ ինչեր էր պահանջում «Մշակի» անմոռանալի հիմնադիրը «Բազմավէպից» և ապա մտածեցէք թէ ինչ պիտի պատասխանէիք, եթէ այժմ էլ նա կենդանի լինէր և պահանջէր մի և նոյնը։

Մի նկատողութիւն ևս։ Ի զուր է կարծում «Հանդէս Ամսօրեան» թէ մեր նկատողութիւնը Վենետիկի Մխիթարեանների համար է միայն։ Մենք զանազանութիւն չենք դնում անունների և տեղերի մէջ։ Թող Վենետիկի Մխիթարեանները մեզ չուտ-չուտ տան Հ. Նուրիխանի «Ժամանակակից պատմութեան» նման գրքեր, մենք միշտ չնորհակալ կը լինենք։ Բայց երբ նոյն հայրերը կը սկսեն «միաբնակութեան և երկաբնակութեան» խնդիրներ յարուցանել, այն ժամանակ մենք չենք խնայի նրանց։

Ի վերջոյ արձանագրենք մի ազգ փաստ. «Հանդէսը» թոյլ է տուել իրան ասել թէ մեր նկատողութիւնը գրելով մենք միտք ենք ունեցել «մաքրել մեր հին հաշիւները Մխիթարեանների հետ»։ Մեզ ծիծաղեցրեց այդ նուրբ գիւտը։ Հաշիւ ունենալ Մխիթարեանների հետ, այն էլ հին հաշիւ... խոստովանում ենք դա չատ զուարճալի մի անհեթեթութիւն է, որ ցոյց է տալիս թէ հայը նոյն իսկ Եւրոպայում էլ չէ կարողանում մոռանալ իր ազգային հին յատկութիւնը—ամեն ինչ վերագրել անձնական միտումներին, հաշիւներին...

Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մերվ, յունվարի 9-ին

Այս երկտողը ուղղելով ձեզ, խնդրում եմ հաճէք մի անկիւն չնորհելու «Մշակի» մէջ։

1894 թւի դեկտեմբեր ամսի վերջերում, Թիֆլիսից մի պարոն, Յակոբ Ճաղարբէգեան, ուղարկելով ինձ բաժանորդագրական թերթ, խնդրում էր իմ ծանօթների շրջանում բաժանորդ գրել տալ իր «Քննադատական յօդուածներ» գրքի համար, որը, ինչպէս ինքն էր գրում, չուտով լոյս պիտի տեսնէր և ուղարկվեր բաժանորդներին։ Յարգելով պարոնի խնդիրը, ձեռնարկեցի բաժանորդագրութեանը և ժողովելով 13 բուբլի, բաժանորդագրական ցուցակի հետ, ուղարկեցի իրան։ Սակայն մինչև այժմ անցել է երկու տարուց աւելի, և այսքան միջոց ոչ գրքեր ենք ստացել պարոնից և ոչ՝ գէնէ նամակ։

Արդ, որովհետև բաժանորդները ինձ դէմ են խօսում ու գրքեր պահանջում, կան և այնպիսիները, որոնք կասկածում են անգամ, ուստի բարոյական պարտք եմ համարում «Մշակի» միջոցով յայտնելու բաժանորդներին, որ հանգանակած փողը մօտ երկու տարի առաջ է ուղարկվել պ. Յակոբ Ճաղարբէգեանին։ Դրա հետ միասին դիմում ենք հրապարակով պարոնին առաջարկելով, որ երկար լռութիւնից յետոյ վերջապէս բացատրութիւն տայ իր վարմունքի մասին։

Ար. Թումանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից։

Երէկ, յունվարի 17-ին, վախճանվեց կառավարչապետի օգնական կոմս Տատիշչեվի ամուսինը՝ կոմսուհի Ս. Դ. Տատիշչեվա։

Թագաւոր Կայսրը, ներքին գործերի մինիստրի ամենահպատակօրէն զեկուցման համաձայն, բարեհաճեց թոյլատրել հաստատել երեք յանձնաժողով Մոսկվայում, Պետերբուրգում և Օդէսայում՝ սովատանջ հնդիկների համար դրամի և հացի նուիրատուութիւններ ընդունելու և ստացած նուէրները տեղը հասցնելու համար։

Մենք հաղորդեցինք անցեալ անգամ, որ Սուրմալուի հայ ժողովուրդը բողոքագիր է ներկայացրել Վեհափառ Կաթողիկոսին՝ խնդրելով յետ ուղարկել գործակալ Հմայեակ վարդապետ Արշարունուն կամ նրա տեղ մի այլ արժանաւոր անձն նշանակել։ Այժմ, ինչպէս մեզ հաղորդում են Իգդիրից, Վեհափառ Կաթողիկոսը յետ է ուղարկել Արշարունուն Իգդիր, նորից նշանակելով նրան գաղթականների խնամակալ-մատնաժողովի նախագահ, առանց գործակալութեան պաշտօնի։

—

Երգչուհի Աղել Բօրգի բացառութիւն է կազմում մեր քաղաքն այցելող արտիստների շարքում, որոնք, ընդհանրապէս, որ և է բարեգործական նպատակի չեն ծառայեցնում իրանց ձայնը և տաղանդը։ Այդ կողմից չնորհալի երգչուհին արժանի է չնորհակալութեան։ Մեր հասարակութիւնը, որ ահագին բազմութեամբ ներկայ էր յունվարի 16-ի կօնցերտին, երկարատև ծափահարութիւններով յայտնեց նրան իր համակրութիւնը թէ գեղեցիկ երգեցողութեան և թէ բարեգործական նպատակով տուած կօնցերտի համար։ Հռչակաւոր երգչուհին մեծ յօժարութեամբ կատարեց հասարակութեան խնդիրքը՝ կրկնելով մի քանի համարներ։ Բարեգործական ընկերութիւնը, նախագահ Ալէքսանդր Անանեանի միջոցով, տուեց երգչուհուն երկու գեղեցիկ փունջ։ Ժողովարանի դահլիճին կից կազմված էր բուֆէտ, որտեղ ծախվում էին քաղցրեղէններ և խմիչք։ Չենք կարող չը յիշատակել, որ մի միլիոնատէր, եկած մեր քաղաքը նաֆթային աչխարհից, առաջնորդվելով դէպի բուֆէտը՝ իր հասարակական առատաձեռնութիւնը անմոռացրեց... 10 բուբլիով։ Երևի մեր հարուստների ասպետութիւնը դրանից հեռու չէ անցնում... Կօնցերտից և բուֆէտից զուտ արդիւնք կը մնայ ընկերութեան համար 1,000 բուբլի։

—

Թիֆլիսցիներին լաւ ծանօթ Սօլոմոն խան Մելիք-Մեհրաբով այժմ իր հրապարակախօսական տաղանդը և գրիչը փորձում է իշխան Մէշչերսկու օրգան «Гражданинъ» լրագրի էջերում։ Մի մեծ յօդուածով, որ կրում է նրա ստորագրութիւնը en toute lettre, Մեհրաբով ձգտում է ապացուցանել, որ ոչ միայն Թիւրքիայի, այլ և Պարսկաստանի մահմեդականների առաջաւոր անձինք, պարբերական մամուլը և գիտնականները ներկայումս միայն մի նպատակ ունեն—կազմել իսլամի դաշնակցութիւն, որպէսզի երկրագնդի բոլոր մուսուլմանները զինաւորվեն քրիստոնէութեան դէմ և պատրաստ լինեն ոչ միայն պաշտպանութեան, այլ և յարձակման համար։ Անցնելով ապա իր սիրած թէմային—«Կովկասի հայերի սեպարատիստական ձգտումներին և ցնորքներին», Սօլոմոն խանը յայտնում է, որ միակ միջոցը վերջ դնելու այդ ցնորքներին,—Փոքր Ասիայում բէֆորմներ մտցնելն է, բայց որովհետև սուլթանը որ և է կերպով չի համաձայնվի և չէ էլ կարող մտցնել այդ բէֆորմները, ուստի միակ միջոցն այն է, որ Ռուսաստանը ուղղակի գրաւի հայկական նահանգները, առանց միւս պետութիւնների համաձայնութեան և օգնութեան դիմելու։

—

Նորերս Պետերբուրգում տօնվեց յայտնի քանդակագործ Անտակոլսկու յօբելեանը։ Ռուս գրող Վ. Ստասով յօբելեանի օրը արտասանած իր ճառի մէջ ցոյց տուեց այն խոշոր ծառայութիւնները, որ յօբելեարը մատուցել է ռուսաց քանդակագործութեան։ Այդ ճառը սաստիկ վրդովեցրել է «Новое Время» լրագրին, որը, իր զայրոյթի մէջ հասել է այնպիսի անհեթեթութեան, որ զարմանք է յայտնում, թէ ինչպէս ռուս հայրենասէրը կարողացաւ գովաբանել հրէայ քանդակագործին (Անտակոլսկին ծագումով հրէայ է)։ «Ռուսը և հրէան նոյնքան անհամեմատելի են, որքան հանճարը և չարագործութիւնը»—բացականչում է Սուվորինի արժանաւոր աչխատակիցը՝ Բուրենին։

—

Յունվարի 15-ին, Թիֆլիսում ապրող բագուցի հարուստ Աւետիս Ղուկասովի տանը մեծ գողութիւն տեղի ունեցաւ։ Գիշերը, տնղուկը բաց անելով, տարել են 40 հազար բուբլու վեքսելներ, թանգագին քարեր և արժէթղթեր, և մօտ 600 բուբլի առձեռն փող։ Կասկած յայտնված է տան ծառաների վրա։ Իրեղէնների մի մասը արդէն գտնված է, և ոստիկանութիւնը յոյս ունի գողերին գտնել։

—

Մեր թղթակիցը գրում է մեզ Ամերիկայի Բոստոն քաղաքից, որ Նորերս այնտեղ Վանի յայտնի գործող օրիորդ Քիմպլը մի դասախօսութիւն կարդաց հայերի մասին։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Այժմ, Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի հասցրած նպաստներից յետոյ, կարելի է հաստատապէս ասել, որ Սուրմալուի գաւառի գաղթականներից միայն տղամարդիկ զգեստի կարիք չունեն, բայց երեխաների ու կանանց չորերի անագին պէտք կայ, ինչպէս և ալիւրի և վառելիքի։ Այս օրերս Ալիղամարլու գիւղում պատսպարված գաղթականները զալով այստեղ, յայտնեցին, որ գիւղացիները, հակառակ իրանց խոստման, այլ ևս իրանց ալիւր չեն տալիս։ Պէտք է ասել, որ Սուրմալուի գաւառում միայն 2 հայ գիւղեր — Էվջիլար և Ալիղամարլու անսիրտ գտնվեցան դէպի գաղթականները և զլացան նրանց հաց տալ։ Խնամակալութիւնը կարողանում է այժմ չաբաթը երկու անգամ—կիրակի և հինգշաբթի օրերը, գաղթականներին միս բաժանել»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Յունվարի 14-ին, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան օրը, սուրբ Յովհաննէս եկեղեցում յաջորդ Բագ-

բատ և դղակետ, Գէորգ-Թաւաքալեանց, ներկայութեամբ մեր քաղաքի բոլոր քահանաների և մեծ բազմութեան, հանդիսաւոր պատարագ մատուցց։ Պատարագից յետոյ հայր սուրբը ոգեորված քարոզ խօսեց տօնի առիթով. պատարագին Գալրութիւն էին անում փակված դպրոցի աշակերտուհիները, իրանց ուսուցչի ղեկավարութեամբ։ Պատարագին ներկայ էին քաղաքի մանաւոր դպրոցների բոլոր աշակերտները իրանց ուսուցիչներով։

—

ՊԻԱՏԻԳՈՐՍԿԻՑ մեզ գրում են. «Յունվարի 12-ին հայոց դպրոցում մանկական ներկայացում կար։ Խաղացին «Բաղդաւորութիւնը համաձայնութեան մէջ է» և «Ժամացոյց» մանկական պիէսներ։ Անտրակտներին երեխաները երգում և ոտանաւորներ էին ասում։ Խաղից յետոյ երեք կենդանի պատկեր դրվեց. մէկը ներկայացնում էր՝ քուրդը հայի տանը, որ ուզում է խանչալով սպանել մարդուն և յափշտակել կնոջը, իսկ տղէն հայը ընդդիմադրում է նրան։ Երկրորդը՝ կինը հերարձակ ուշագնաց ընկած է գետին, կողքին իր ամուսինը, որի կրծքի վրա չոքել է քուրդը և խանչալը կուրծքը խրել. իսկ երրորդը՝ Թիւրքիայից փախած հայ կինը իր փոքրիկ աղջկայ և տղայի ձեռքից բռնած, մէջքին կապած իր ունեցած փալասները, ցնցոտիների մէջ, ձեռքերը մեկնած՝ ողորմութիւն են խնդրում։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վանից, դեկտեմբերի 23-ին, մեզ գրում են. «Այսօր մեր թչուառութիւններ օր ըստ օրէ կը բազմապատկին. առաջի հիւանդութիւն թէ ասա՝ քաղաքի մէջ, և թէ գաւառներ մեծամեծ ջարդեր կանէ. մեր խեղճ չինականներից շատեր մեկ և հայի կարօտ վիճակի մէջ են. կառավարութիւն դեռ չը բարեհաճեցաւ այդ թըչուառութիւններ ամոքելու համար հանրային ընդհանուր ճիգին մաղով մը անդամ օգնելու։

«Անապահովութիւն վերջին ծայր հասած է. ընդհանուր կոտորածի հաւանականութիւն և երկիւղ ամենի ուշն ու մտածութիւններ գրաւած են։

«Թիւրք մոլեռանդութիւն իր ծայրագոյն աստիճանին հասած է. չը գիտենք թէ կուսակալ Շիմսէդդին ալէ պիտի կրնայ յաջողիլ այս անգամ ևս մեր տխուր ճակատագիր առ ժամ մը յետաձգել...։

«Խանութներ, որ կաղնիկաղ բացուել սկսած էին, օրերս բոլորն ալ գոցուած են։ Անոնց տէրերը սուգ կապած ահ ու դողի մէջ իրենց տուներ քաշված կը մնան։

«Անցեալներ կայսերական ներումն կիսատ կերպով գործադրվեցաւ. հայ անմեղ բանտարկեալների հետ ազատվեցան նաև թիւրք ու քուրդ նշանաւոր մարդասպան աւազակներ։ Բայց չը նայած այդքանին իսկ. ներումն առիթ դարձաւ թիւրքերի աւելի գրգռութեանց»։

—

Կ. Պոլսից հեռագրում են «New-Iork-Herald» լրագրին, որ սուլթանը, Արթին փաշա Դաղեանի յորդորով, հրատարակեց հետևեալ կարգադրութիւնները պարունակող իրադէն.

1) «Հայկական նպաստամատոյց յանձնաժողովը» պէտք է օգնութիւն ցոյց տայ բոլոր կարօտեալ հայերին։

2) 2000 ֆունտ լիրա պէտք է յանձնվի յանձնաժողովին՝ հայերին բաժանելու համար։

3) Երկրագործական բանկը պէտք է օգնէ հողագործներին և նրանց դրամ փոխ տայ՝ ցորենի գրաւականով։

4) Գաւառական խորհուրդները լիազօրութիւն են ստանում զինուորական ծառայութիւնից ազատելու համար. նրանք կարող են ժամանակամիջոց տալ մի կամ երկու տարով, նայելով հանգամանքներին։

5) Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնվի էֆֆօրների գործադրութեան վրա ոստիկանութեան ծառայութեան մէջ մարդկանց ընդունելու, և ընդհանուր—նահանգապետների օգնականներ ընտրելու, ինչպէս և հողային սեփականութեան պահանջների վերաբերմամբ։

6) Հայ բանուորները և ծառայողները նորից պէտք է ընդունվին օսմանեան վարչութեան ծառայութեան մէջ։

Պէտք է, ճշմարիտ, զարմանալ սուլթանի առատաձեռնութեան վրա, որ կոտորել տալով 130,000 հայ և աւերելով նրանց տները, կամենում է այժմ իր մեղքը քաւել 2000 թիւրքական լիրայով։ Եւ երևի, հայոց պատրիարքարանն էլ երախտագիտութեան ուղերձ կը մատուցանէ նրան։

—

«Standard» հաղորդում է, որ Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը երկիւղով է սպասում, թէ ինչով կը վերջանան դեսպանների բանակցութիւնները։ Շատերը կարծում են, որ ճգնաժամի լուծումը չէ կարող առանց շատ կամ քիչ ծանր անկարգութիւնների և խռովութիւնների անցնել։

—

«Kolnische Zeitung» լրագրի թղթակիցը հեռագրում է Կ. Պոլսից. «Հայոց զաղտնի կոմիտէի քսան անդամներ եկել են այստեղ։ Թէև օսմանեան բանկի վրա յարձակվող յեղափոխականների երկու պարագլուխների վերադարձը դեռ հաստատված չէ. բայց բանկի ծառայողներից մէկը ասել է, որ հանդիպել է նրանց փողոցում։»

—

Անգլիական ամսագիրների յունվարի համարների մէջ տպագրվել են մի շարք յօդուածներ հայերի մասին։ «Progressive Review» ամսագրի մէջ Ջէմս Արնանդ զետեղել է մի յօդուած «Հայաստան և ներքին քաղաքականութիւն» վերնագրով։ «Scribner's Magasine» ամսագրի մէջ հրատարակված է Իվան Տրօչայնի յօդուածը «Ականատեսի դիտողութիւնները Կ. Պոլսի կոտորածների մասին»։ «New Century Review» ամսագրի մէջ հոգեորական Հավէյս զետեղել է մի յօդուած «Մի պարսիկ՝ հայկական կոտորածների մասին» վերնագրով։ Կաթոլիկ «Catholic World» ամսագրի դեկտեմբերի համարում տպագրված է Ջորջ Դերմօի մի յօդուածը, որ կրում է «Մեծ մարդասպանը և Հայաստանի քրիստոնեաները» վերնագիրը։

ԹԻՒՐՔԵՐԷՆ «ՎԱՆ» ԼՐԱԳԻՐԸ ՎԱՆԻ ՄԷՋ

—

1894 թուականներու սկիզբը Վանայ Պարիզ բաչան՝ Վարագայ ս. խաչի տպագրական գործիքներ քանդելով քաղաքի մէջ բերաւ. թէև առաջնորդը և թէ վանուց վանահայր հայր Դանիէլ շատ ընդդիմացան, սակայն կուսակալի ճընշման և սպառնալեաց ստիպուեցան տեղի տալ։ Սկզբում կուսակալն ըսաւ, որ քանի մը ամսէն սուլթանի ղրկած մամուլը արդէն տեղս կը հասնի, և խոստացաւ ամիսը 22 լիրա (200 ռուբլի) վարձք տալ Վարագայ վանքին։ Սակայն խոստումն լոկ խոստում մնաց և մամուլի գալն ալ մինչ ցարդ կը սպասենք։ Այս այն մամուլն էր, զոր Խրիմեան հայրիկ Եւրոպայէն բերաւ, որով կը հրատարակէր «Արծուի Վասպուրական» շաբաթաթերթ։ Ինչ և է դառնամք մեր նիւթին. գործիքներ բերելով պատրաստուած տեղն սարգեցին, սակայն ոչ գրաչար և ոչ ալ տպագրող կար։ Ուստի այն մարդիկ, որոնք Վարագայ վանուց մէջ ծառայած էին, ստիպմամբ գործի կանչեց առատ ռոճիկներ խոստանալով։ Ընթերցողն թերևս զարմանայ, թէ երբ առատ ռոճիկ կուտային, այլ ևս ստիպում ինչ հարկ կար։ Սակայն ամսականի միայն լոկ անուն կար։ Վերջապէս ամէն բան սարքուեցաւ և հրատարակուեցաւ խոշոր վերնագրով ու զարդարուն տառերով «Վան շաբաթաթերթ լրագիր։» Սակայն ով պիտի հետաքրքրուէր այդ լրագրով և բաժանորդ գրուէր. թէ թիւրք և թէ հայ ժողովրդէն ոչ ոք ինքնայօժար չը մասնակցեցաւ։ Կառավարութիւն ատոր դիւրին միջոց գտաւ. կանչեց աչքի զարնող հայեր, որոց մէջ 5—6 հոգի հազիւ թիւրքերէն կարդալ գիտէին և սպառնալիքով ամենէն 3-ական մէճիտ (5 ր.) առաւ իբր տարեկան բաժանորդագրութիւն։ Ցեռոյ բաչան կանչեց ամէն հայ թաղերու մեծեր և 6-ական մէճիտ ալ անոնցմէ առաւ, ու 2 օրինակ լրագիր տուաւ հասարակ ժողովրդի կարդալու համար։ Իսկ այդ 6 մէճիտ, այսինքն 10 ռուպլին, իբր հարկ, թաղի բնակչաց վրա բաժնուեցաւ։

Ընդամէնը 450 օրինակ տպուած էր. բայց այս ամէն կարգադրութիւն ընելով հանդերձ տակաւին 300 օրինակէն աւելի մնաց. կուսակալը չափազանց կատղեցաւ, թէ ինչ կը նշանակէ, որ թիւրքեր բաժանորդ չեն գրուիր, ուստի հրամայեց, որ ամէն թիւրք պաշտօնեայներուն մի մի օրինակ ճամբեն և 3 մէճիտ հաշուեն իր ռոճիկի դիմաց։ Մինչ այս ամէն կարգադրութիւնք՝ արդէն մի շաբթէն աւելի անցաւ, բայց մինչև որ տպուած օրինակներ չը ծախսէին, նորեր տպել անհնար էր։ Ուստի շաբաթաթերթ այս անգամ կիսատ մնաց։ Իսկզբան հրատարակուած լրագրի ծաւալն «Մշակի» չափն էր, բայց հետզհետէ փոքրացաւ, ոչ թէ ծաւալն, այլ մէջի գրութիւն, վասն զի չորս կողմէն մի թիզ անտիպ թուղթ էր։ Ասոր ալ գոհ էինք, վասն զի մեծածաւալ թուղթ գէթ բանի մը կրնար ծառայել, բայց քիչ քիչ թուղթն ալ փոքրացաւ, գրութիւնն ալ, այնպէս որ հասարակ տետրակէն մի քիչ մեծ մնաց։ Ցաւսով եմք, որ մինչ մի տարի այդ լրագիր այնչափ պիտի փոքրանայ, որ մանրադիտով հազիւ տեսանելի լինի...

Իսկ ամենէն հետաքրքրական էին «Վան» լրագրի մէջ հրատարակուած նիւթեր, որոնցմէ մի քանիս կը յիշենք։ Օրինակ, մի անգամ խմբագրական այսպէս էր. «Որովհետև մեկներ շատ ճնասակար կենդանիներ են, պէտք է ամէն կերպով աշխատել զանոնք չնչել և ամենէն դիւրին միջոցն այս է. սպունգի մասը կտորներ իւղի մէջ թրջելով պէտք եղած տեղ դրէք. մեկներ ատոնք ուտելով, երբ չուր խմեն, այդ սպունգ պիտի ուռի և մեկներ սատկեցնէ»։ Մի անգամ կառավարութիւն մի հայու տուն պարտքի դիմաց ծախու հանած էր. «Վան» լրագիր ելաւ հրատարակեց թէ «այս ինչ թաղ այս ինչ մարդու տուն կառավարութեան ձեռքով կը ծախուի. ով որ պէտք ունի՝ թող երթայ գնէ»։ Ցետոյ լրագրի խմբագիր կառավարութեան ձեռքով կանչեց այդ պարտատիրոջ և ըսաւ, որ 2 մէճիդ ($3^1/_5$ ր.) պէտք է տաս, վասն զի քո տուն ծախել հրատարակած ենք լրագրի մէջ. իսկ պարտատէր պատասխանեց. «Ձեզ ով ըսաւ այս տեսակ բան մը հրատարակեցէք»։ Խմբագիր խրոխտանօք և զայրացմամբ պատասխանեց. «Ինչ որ մեր պարտականութիւն է մենք կը կատարենք. պէտք է 2 մէճիտ անմիջապէս տաս, ապա թէ ոչ բանտ կը ղրկեմ քեզ»։ Խեղճ հայն փղձն առաւ և օձիքն ազատեց։ Վերջապէս իրրև թղթակցութեան նմուշ առաջ կը բերենք թիւրքերէն լրագրի հետևեալ փաստը. «Նամակ Արճէշէն.—Ամսոյս 15-ին Արճէշի Եկմալ գիւղի մէջ երկրաշարժի զօրաւոր ցնցումներ տեղի ունեցան, սակայն տեղոյս գայմագամի չնորհիւ ոչ մի վնաս չեղաւ»... Կարծես թէ երկրաշարժ եղած ժամանակ գայմագամ այդ գիւղ գրկած լինէր և ցնցումներ դադրեցնէր։ Ասոնցմէ աւելի ծաղրելի ասողագիտական յօդուածներ կային, որք շատեր կը կարդային զուարճանալու և ծաղրելու համար միայն...

Ս.

—

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմիա, դեկտեմբերի 24-ին

Ասորիները անցեալ շաբաթներում երկարատև մի ընդհանուր ժողով գումարեցին։ Մի գիտնական և կրթված կաղա (պատուոր) ասեց ինձ, որ 500 տարիներից ի վեր այս առաջի անգամն էր, որ նեստորական, կաթոլիկ, բողքական և եպիսկոպոսական ասորիները ի մի վայր հաւաքված, խորհեցին և գործեցին իրանց ներկայ ցաւալի վիճակին մի գործնական դարման առնելու։ Դրանք մի ազնկայոյզ և կուսարար ժողովուրդ են, դիւրագրգիռ և բարկացկոտ։ Եւրոպացիք շատ յոյս չունէին, որ այդ ժողովը տեղի կունենար և սպասում էին, որ կատաղի կռիւներ և արիւնահեղ դէպքեր պատահէին. սակայն, ի մեծ զարմացում ամենեցուն, կինիղեան (ժողովը) գումարվեց և շատ բարեկարգ կերպով օրից օր նիստերը շարունակվեցին։ Ընդունված որոշումներն են. 1) Ցարգել կրօնական ազատութեան սկզբունքը և թոյլ տալ, որ ամեն մարդ իր խղճի ձայնի համեմատ պաշտէ իր Աստուծուն. 2) պաշտպանել և մշակել ասորիների միութեան գաղափարը. 3) ընտրել ազգային պատուիրակների քուէով մի ընդհանուր ներկայացուցիչ, որ իբրև ասորական ժողովրդեան ազգապետը հանդէպ կառավարութեան՝ վարէ ազգի գործերը. 4) այդ պաշտօնեան տարեկան ռոճիկ ստանայ ազգից և բնաւ որ և է կաշառք կամ նուէր չառնէ անհատներից. 5) հաստատել ազգային տուրք և նշանակել վարչական ժողով հայթայթված գումարը ազգի պէտքերին յատկացնելու առանց կրօնական խտրութեան. 6) ամենայն կերպ աշխատել ժողովրդեան մէջ արմատացած մոլութիւնները և վատ սովորութիւնները միջից բառնալ, զորօրինակ արբեցութիւն, մեռելաճաչ սալ, կանանց ոտաբոբիկ և չը քողարկված փողոցներում ման գալը և այլն։

Մնում է մեզ բարեմաղթել, որ այդ բարի նպատակները փութով իրագործվեն։

Արգաս

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունվարի։ Յունվարի 15-ին, ցերեկվայ 2 ժամին, տեղի ունեցաւ Բարձրագոյն թոյլատրված համագումար ժողովը Ռուսաստանում սիֆիլիսի դէմ ձեռք առնելի միջոցների քննութեան համար։ Համագումար ժողովին եկել են աւելի քան 400 անդամներ։ Նիստը բացվեց ներքին գործերի մինիստրի ճառով։ Վաղվանից կը սկսվեն համագումար ժողովի բաժանմունքների պարապմունքները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունվարի։ Յունվարի 15-ին վախճանվեց լէյբ-բժշկապետ Նիկոլայ Ֆեդորովիչ Զդեկաուէր։

ՊԱՐԻԶ, 16 յունվարի։ Սինիտար Մուրավիէվ հասաւ Պարիզ, առաւօտեան $8^3/_4$ ժամին։

ՎԻՍԲԱԴԷՆ, 16 յունվարի։ Կոմս Մուրավիէվ հասաւ այստեղ 2 ժամին այստեղ ապրող իր մօր հետ տեսակցելու և 5 ժամին ճանապարհ ընկաւ Պարիզ։

Կ. ՊՕԼԻՍ, 16 յունվարի։ Սանիտարական խորհուրդը առաջարկեց արգելել չին մահմեդականների ուխտագնացութիւնը և մեռածների դիակների փոխադրութիւնը Հնդկաստանի սահմաններից դուրս։

ՅԷՏԻՆԻԷ, 16 յունվարի։ Մէկ կապիտան, մի քանի ուրիշ օֆիցէրներ և 80 զինուորներ գնացին Կանէյա՝ Կրետէի ժանդարմէրիայի չարքերը մրցելու համար։

ՊԱՐԻԶ, 16 յունվարի։ Կոմս Մուրավեով Հանոտօի հետ գնաց հանրապետութեան նախագահի մօտ։

ԼՕՆԴՕՆ, 16 յունվարի։ Լիսսաբոնից հաղորդում են, որ Գոաի հիւանդանոցում մեռան երեք տեղացիներ, որոնք եկել էին Բոմբէյից։

ԲՈՄԲԷՅ, 16 յունվարի։ Պաշտօնական տեղեկութիւն. ժամանակով հիւանդացան—4,396. մեռան—3,275։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐՏՈՒՌԻՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. գուրս է գալիս	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	9 „ 55 „ եր.	12 „ 25 „ ցերե.
Թիֆլ. գուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բագու հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.

Բագուից գուրս է գալիս	2 ժ. 30 ր. ցերե.	11 ժ. 5 ր. գիշ.
Թիֆլիս հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ եր.
Թիֆլ. գուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում հասնում է	9 „ 45 „ եր.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Էնդ հոդու համար		
Թիֆլիսից գուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գիշերում է	Մշտապես	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Դեց հոդու համար (չեն գիշերում)		
Թիֆլիսից գուրս է գալիս	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 5 „ ե.
Լիսդիկավկազ հասնում է	12 „ —ցերեկ	8 ըրկ. „ 0

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով ՄԱՍՍԱԺՈՎ, և առաջնական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ $5^1/_2$—$6^1/_2$ ժամը երեկոյեան։ Աւչալեան փողոց, № 19։

3—148 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

Լոյս տեսաւ

ՊՐՕՖԷՍՕՐ Ի. Հ. ԻՆԳԻԱՅԵՄ

ԱԴԻՆԱՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

„ԹԱԳԱՒՈՐ Ի ՏԱՆԷ ԴԱՒԹԻ“

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ

20% յատկացրած է հայ գաղթականների օգտին, (բացի գրավաճառանոցներում ծախածների)

Ծախվում է Կենտրօնական գրավաճառանոցում, Ցակոբեանցի մագազինում, Դվորցովայա փողոցի վրա։

Հասցէն՝ Нагорная ул. № 9. Священнику Овсепу Тер-Петросянцу. 2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, Վ. օրենցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 *ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։*

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 *ժ. աչքի, ներքին և նեարդային հ.*

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴՆԿՈ—10—11 *ժ. կանանց և երեխ. հ.*

Զ. Ի. ԲԱԲԱՍԱՆԵԱՆՑ—10—11 *ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ* $1^1/_2$—2 *ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի։*

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 *ժ. ականջի, կոկորդի քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—12—1 *ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։*

Ա. Գ. ԵԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ *ժ. ներքին և երեխայոց հ.*

ՍԲԵԿՈՆՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 *ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—5—6 *ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։*

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 *ժ. Սիֆիլիսի, մկդի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.*

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ *քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ է անում մկդի, խիխ, աչեան, կաթի և այլն։*

Վճար 50 *կ.։ Համախարհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։*

Հիւանդանոցի վերատեսուչ

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Ա Զ Դ

Շապին-Գարահիսարցի ԱՀԱՐՈՆ ԱՆԱՆԻԱՑԵԱՆ՝ վեց տարի առաջ, իր դստեր հետ միասին հեռացել է Կ. Պոլսից. դէպի Եալթա (Խրիմ)։ Ասում են, որ նա իր դստեր ամուսնացնելուց մի երկու տարի յետոյ իբր թէ մեռել է։ Վերոյիշեալ Ահարոնի անբաղդ կինը Կ. Պոլսում այժմս գտնվում է անտանելի թշուառ վիճակի մէջ։ Ուստի՝ այս մասին ով որ ճիշդ տեղեկութիւն ունի, թող շուտով յայտնէ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին։ (№ 152) 2—5

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Ցնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՑԾԱԿ»։ Մի քանի, րօպէում նորոգում է հին, անչնորհ, խաղխղած կահկարասիքը, պիանինօ, բոյալներ, հայելիի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տփիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը։ ԳԻՆԸ՝ 1 ր.։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոշտերից (մոզոլներ), ելունդներից և կաչուէ այլ ուռոյցքներից։ «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, ելունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում։ ԳԻՆԸ՝ 60 կ.։

Ծախվում է դեղարարական խանութներում։ Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների կովկաս. ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։

22—50 (22 №)

„ԲԱՐԻ ԳԻՇԵՐ“

Առանձին արժանաւորութեան փոշի միջատների դէմ

անմոռանալի մասնագիտութիւն

Բ. ԿԷՕԼԷՐ և ԸՆԿ. ՄՈՍԿՎԱՑՈՒՄ

ընկերութեան ֆաբրիկայի

ՎԱՃԱՌՈՒՄԸ

ամեն տեղ,

բոլոր փոքր ի շատէ նշանաւոր առևտրականների մօտ։

(№ 106) 13—15

Զգուշացրէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպինները, սեսրիլիանը, գեղին բծերը, պուզիկները և պատուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։

Կտորի գինը 50 կ., $^1/_2$ կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իրդէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի և Գրիմշակի, պ.պ. Պոպովների և Աբիսակովի մօտ։

(№ 7) (ա. 1 և 15) 14—24



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Ցնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՑԻՆ ՁԷԹ, սմբակները սնդացնելու, կակղացնելու և սեացնելու համար։ Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման։ ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.։

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻԲ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չոսիբլէանների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար։ ԳԻՆԸ՝ 75 կօպ.։

ԹԱՄԲԱՑԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար)։ Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և գունաւոր գոյների կաշի մաքրելու։ ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.։

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։

(№ 22) 24—50

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՁՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գին կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՑԻՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար կայսերական երաժշտական ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ,
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 17—20

Սօֆիա Ալէքսանդրեան Ռունչեանց, Դարիա Իսահակեան Դաւրիչեան, յայտնելով իլանց թանդսին ազգկայ և թոռան

ԱՄԱԼԻԱՑԻ

մահվան մասին, խնդրում են ազգականներին և ծանօթներին չնորհ բերել յուղարկաւորութեանը ֆրէյլինսկայա փողոցում, № 18 բնակարանից դէպի ս. Նշան եկեղեցին, կիրակի, յունվարի 19-ին, առաւօտեան 10 ժամին։ Ամբիծքը այսօր, շաբաթ օրը, ժամը 6-ին։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ցայտնում է ի գիտութիւն հասարակութեան, թէ համաձայն իր որոշման 28 դեկտեմբերի 1896 թ-ի, որ հաստատել է թիֆլիսի պարոն նահանգապետը 8 յունվարի 1897 թ-ի նա ձեռնարկել է

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ

կազմելուն, որով պէտք է կատարվին 1897—1901 քառամեակի քաղաքային Դումայի իրաւասուների ընտրութիւնները՝ ընտրողների ժողովում, որ նշանակված է 1897 թ. մայիսի 18-ին կիրակի օր։

Ցիշեալ ցուցակի մէջ պէտք է մտցվին (համաձայն Քաղաք. կանոն. 24 յոդ.) Ա. այն մարդկանց անունները, որոնք ռուսահպատակ են, նոյնպէս և բարեգործական, գիտական և ուսումնական հասարակութիւնները և կառավարչական այն հասարակութիւնները, որոնք առ նուազն մի տարով, Թիֆլիսի քաղաքի սահմանում, սեպհականութեան կամ ցմահ տիրելու իրաւունքով տիրում են այնպիսի անշարժ կալքի, որը ենթարկված է յօգուտ քաղաքի վերցնվող գնահատական տուրքի, և այդ տուրքն առնելու համար եղած գնահատման միջոցին առնուազն 1,500 ռուբլի արժէ։ Բ. այն ռուսահպատակ անձերը և պետութեան օրէնքների հիման վրա հաստատված ընկերութիւնները, ընկերակցութիւնները ու միութիւնները, որոնք Թիֆլիսի քաղաքի շրջանում առնուազն մի տարի պահում են, ինչպէս անձինք, նոյնպէս և հաստատութիւններ, այլ և առևտրաարդիւնագործական ձեռնարկութիւնները, առաջին կամ երկրորդ կարգի գիլդիական վկայութիւններ են վերցնում։ Քաղաքային Վարչութիւնը պարտք է համարում նաև աւելացնելու, որ ընտրողների ցուցակները պատրաստ կը լինին, համաձայն իր նոյն որոշման, առ 1-ն փետրվարի 1897 ամի։ Ուստի ով որ ուզում է իր անունը մտցնել յիշեալ ցուցակների մէջ, պարտաւոր է մինչև 1897 թ-ի յունվարի վերջը վճարել իր վրա եղած քաղաքային առ 1-ն յունիսի 1896 ամի եղած տուրքը, որպէս զի նրանց վրա այդ տուրքերի պարտքը կէս տարվայ գումարից աւելի չը լինի (Քաղաք. կանոն. 33 յոդ. 8 կէտ.)։ (№ 6) 2—3

ԲԵՐՏԷ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տունը (որը գոյութիւն ունի 1868 թ-ից) պատիւ ունի յայտնելու պ.պ. շերամապահներին, որ ԲԱՂԴԱԴԻ ՍՊԻՏԱԿ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՂԻՆ ԲՕՃՕՃԻՑ ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՍԵՐՄԸ գտնել ցանկացողները գնի և պայմանների մասին պէտք է դիմեն Կովկասի և Պարսկաստանի ներկայացուցիչ ԵՂ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ հեռևեալ հասցէով՝ БАТУМЪ, Бр. Мнацаканянцъ.

(№ 146) (ր) 8—12

Դ. ԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Գեղագրութիւն և ամենավաստ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիր-ակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Յանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ Սադովայա փողոց, տուն Մարքարովի, № 27։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիղդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։

ԳԻՆՆ Է 3 ր. 50 կօպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։

(ե. հ.) (№ 141) 10—15

„ՍՐԲԵՆԷ“ „L URBAINE“

կեանքի ապահովագրութեան ՈՒՐԲԷՆ ֆրանսիական ընկերութիւնը

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ԴԷՊ ՄԱՀՎԱՆ, ՊՐԷՄԻԱՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԸՆԴՈՒՆԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԴԷՊՔՈՒՄ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱԼՈՒՆ։

ՕՐԻՆԱԿ. 25 տարեկան անձը, որը այս տարիքով ապահովագրվել է 10,000 ռուբլով 25 տարի պրէմիա վճարելու պայմանով, պէտք է իւրաքանչիւր տարի մտցնի 25 տարի չարունակ 370 ր. 20 կօպ.։ Պրէմիա վճարելու ընթացքում հիւանդութեան դէպքում, ապահովագրվողը ազատվում է որոշ ժամանակում վճարելի գումարի մտցնելուց մինչև կատարելապէս առողջանալը և այդ գումարները յետոյ չեն պահանջվում։ Իսկ ապահովագրվողի մահվան դէպքում այդ ժամանակվայ ընթացքում 10,000 ր. գրամազլուխը անյապաղ վճարվում է։

Իսկ եթէ ապահովագրվողը 25 տարվայ ժամանակամիջոցը անցկացնի, այն ժամանակ Ընկերութիւնը պարտաւոր է՝

1) տալ նրան ապահովագրված գումարի 5%, այսինքն 5,000 ր. առձեռն։

2) թողնել նրա մօտ բացի դրանից 10,000 ռուբլու պոլիս մահվան դէպքում, որպէս կատարելապէս վճարված, և

3) թոյլ տալ նրան ապա մասնակցութեան իրաւունք Ընկերութեան օգուտների մէջ, որը կը տայ ապահովագրվողին իւրաքանչիւրամեայ կենսաթոշակ։

Անդրկովկասեան և Անդրկասպեան երկրի համար գրասենեակը գտնվում է Միքայէլեան փողոցի վրա, № 9, տուն Պոպովի։

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ Բագրատ Գերասիմովիչ Տէր-Մաթէոսեանց։

ՏԵՍՈՒՉ Նիկոլայ Գերասիմովիչ Տէր-Մաթէոսեանց։

Տեղեկութիւնները և բրոշիւրները տալիս են ընկերութեան ագէնտները կայսրութեան բոլոր քաղաքներում։ (ամս. 10,25) 14—16

Дозволено цензурою. Тифлисъ. 17 Января 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ. Лорисъ-Меликовская ул., д. каз.